

Բաժանորդագրին կԱՆԻԻԿ օրացոյցի համար
տարեկան 50 դր., Ռուսիոյ համար 5 ռուբլի.
Ստորին կողմերու համար 12 ֆր.
Վեցամսեայ եւ եռամսեայ բաժանորդագրու-
թիւնք եւս կ'ընդունուին:

Գաղաւթերէն Օսմանեան նամակագրոյժ
կ'ընդունուի 1 զրշ. նոյր. 31 փարայի հաշ-
ւով, կամ 100 զրուշի փոխարէն 115 զրշ.
ԾԱՂԻԿ Վերաբերեալ ամէն գործի համար
գիծել

Առ Տնօրէն-Հրատարակիչ
ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱՆԱԳՆԱՅԵԱՆ
Պոլիս, Պահլէ-Դարու, Թաշխան, քիւ 50

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Գ Ի Ր

درعليه ده بنچه قوسنده طاش خاند
• نومروده « زاغيك » غزتهسى مديرى
بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien «Dzaghik»
Rue Bahtché-Kapou, Tach Han, 50
CONSTANTINOPLE

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻՒ 20

Շ Ա Բ Ա Թ

29. ՓԵՏՐՈՒԱՐ 1892

ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿԻ Տնօրէնութիւնը պատիւ-
ունի ծանուցանել իւր ընթերցողաց
թէ, գոհացումն տալու համար այն
խնդրանաց զորս յաճախ կ'ընդունին,
հաստատած է Յանձնակատարութեան
Գրասենեակ մը:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը հայթայթէ մեծ և փոքր քանա-
կութեամբ ամէն տեսակ ապրանք
թէ՛ Պոլսոյ և թէ՛ եւրոպական հը-
րապարակներէն գնելի, ինչպէս,
գիրք ամէն լեզուաւ, պատկերք,
ձայնագրութիւնք, դպրոցական և
գրասենեակի պիտոյք, ժամացուցի,
տպարանական և այլ արհեստական
գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք,
ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ
կարասիք, և այլն, և այլն:

Վճարմունք կանխիկ են, բայց ի
հարկին կարելի է պայմանաժամաւ
եւս գործել այն տանց հետ որ կըր-
նան արտադրիչներն ապահովել ֆո-
խադրութեան ծախք կը պատկանին
յաճախորդաց:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կ'ստանան նաեւ վաճառումն ներ-
քին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օ-
տար հրապարակաց վրայ: Առ այդ
կը բաւէ շրկել վաճառելի ապրա-
նաց նմանքները:

Յանձնակատարութեան Գրասենեակը
կը փափագի ունենալ թղթակիցներ
գաւառական քաղաքներու մէջ:

Թղթակցութիւնք պէտք է ուղ-
ղուին առ Յ. Գ. Փալադաշեան, Կ.
Պոլիս, Պահլէ գաբու, Թաշխան,
թիւ. 50:

FRATELLI GOLDENBERG

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ, ԱՄԵՆԷՆ ՀԻՆ, ԱՄԵՆԷՆ ՀԱՄԲԱՒԱԻՈՐ

ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՀԱՄԱՅՆ ԵՒՐՈՊ. ԹՈՒՐԿԻՈՑ, ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՑ ԵՒ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԵՋ

ՖՐԱԹԵԼԼԻ ԿՈՆՏԷՆՊԵՐԿԻ

Այս վաճառատուն կը յանձնարարուի հասարակութեան և ամէն մրցման
կրնայ դիմադրել իւր կերպասուց ընտիր յատկութեամբ, պատրաստութեան
տոկոսներով, ինչպէս նաեւ հանդերձին գեղեցիկ կտրուածքով:

ՎԼԽԱՒՈՐ ՄԹԵՐԱՆՈՅԳ Ի Կ. ՊՈԼԻՍ

Թիւնէի քով Թիւ 2, եւ Քարաքէօյի Կամուրջին գլուխը Թիւ 28

ՄԵՄԱԲԱՆԱԿ ԵՒ ՓՈՐՐԱՔԱՆԱԿ ՎԱՃԱՌՈՒՄՆ

ՄԱՍՆ ԱՃԻԻՂՔ

Հոտոտ, Քաւալա, Ռուսուք, Զմիւռնիա, Վառնա, Պուրկոս, Փիլիպէ,
Բոր-Սաիտ, Սելանիկ, Սամսոն, Մերսին, Քիոս, Թարսուս, Ատանա, Պէրութ,
Դամասկոս, Տրիպոլիս (Սուրիական), Եաֆա, Ալեքսանտրիա, Գահիրէ,
Եայլն, Եայլն:

PAPETERIES DE VIDALON

Թ Ղ Ե Ղ Ի Ն Ա Ց

ՄԵԾ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՎԻՏԱԼՈՆԻ

Հիմնեալ 1597 ին յ'Աննօնէ

Դրամագլուխ 3,450,000 Փրանք:

Կ'արտադրէ տարին 3,000,000 քիլօկրամէն աւելի

Ներկայացուցիչ Հանրի Ժարտօն, Պարնաթան խան



Գրասենեակի և տպագրական զանազան տեսակ ընտիր թուղթեր, գծագրու-
թեան թուղթ սպիտակ և դանդաղ գոյներով, ծծուն թուղթեր, զանազան
տեսակ ստուարաթղթեր (մուխալա), լուսանկարչական թուղթեր, մագաղա-
թանման թուղթեր, նամակաց պահարաններ, և այլն, և այլն:

«ԾԱՂԻԿ» կը տպագրուի Վիտալոնի գործատան մէջ պատրաստուած թուղթի
բայ: — Մանրամասն տեղեկութեանց և յանձնարարութեանց համար դիմել
վԾԱՂԻԿԻ Խմբագրատունը:



MAISON PHÉNIX

Բերա, Բասաժ տիւ Թիւնէլ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Շապկեղինաց, ձերմակեղինաց եւ Բրդեղինաց



Վաճառատունս կը յայտարարէ իւր բազմաթիւ յաճախորդաց թէ, Նանսիի և Բիւմպէրկի աշխարհածանօթ գործատուներէն ի նորոյ ստացած է մեծ քանակութեամբ՝ վերջին նորաձեւութեանց համաձայն շինուած՝ արանց, կանանց և մանկանց համար պատրաստ հագուստեղէններ, օժիտի համար բազմատեսակ ձերմակեղէններ, կնուէրի համար մանկանց զգեստներ և այլ ամէն տեսակ ապրանքներ:

ԱՐԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Ղրշ.
Շապկի կտաւեայ	14 էն 47 1/2	
» գունաւոր տպածոյ	» 10 էն 28	
» ֆանէլա	» 21 էն 42	
» գիշերանոց	» 12 էն 27	
Անդրաւարտիկ	» 10 էն 21	
» մատամբօլ	» 15 էն 22	
Օձիք կտաւեայ	տուզինան 17 էն 54	
» Թեւնոց	» 29 էն 65	
Թաշկինակ այլ և այլ տեսակ	» 14 էն 135	
Գունաւոր ֆիլ տէքօս, բամպակեայ, մետաքսեայ, բրդեայ	» 29 էն 145	
Փողկապ այլ և այլ տեսակ	տուզինան 3 էն 19 1/2	

ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ.

	Հատը	Ղրշ.
Շապկի՝ լաւ տպածոյ, դիմացկուն, պրօտըրիով	15 էն 27	
» » » տանթեկայով	» 18 էն 31	
Վարտիկ » » » »	» 14 էն 22	
Վարտիկ » » » պրօտըրիով	» 11 էն 24	
Միսօ » » » »	» 20 էն 38	
» » » տանթեկայով	» 25 էն 65	
Բօրսէ՝ Բարիզի Կուրտէ գործատան	» 26 էն 70	
Բօրսաժ բամպակեայ, մետաքսեայ	» 11 էն 26	
Փանէլա լաւագոյն տեսակէն	» 15 էն 40	

ՄԱՆԿԱՆՑ ՀԱՄԱՐ ամէն տեսակ զգեստեղէնք և ձերմակեղէնք:

	Ղրշ.
Սեղանի սփռոցներ գունաւոր՝ 6 անձեւոցով	20 էն 39
» » գունաւոր 6 և 12 »	65 էն 145
Անկողնոյ ծածկոցք մէթրը	9 էն 17
Գունաւոր ֆիլ տէքօս, բրդեայ, բամպակեայ	տուզինան 40 էն 145
Կտաւ վիշիի, մէթրը	3 էն 5
Սպիտակ տպածոյ՝ լաւագոյն տեսակէն	2 էն 5 1/2

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկի» Յանձնակատարութեան Գրասենեակին:

12—52

Նիքօլա Անտիօսեան

ԼՈՒՍԱՆԿԱՐԻԶ

Ի Պոլիս, Մուլման Պայպլիս,
Քէօքօքիէր պաշը, Թիւ 99

Լուսանկարչատան մէջ կը պատրաստուին ամէն տեսակ լուսանկարներ՝ եւրոպայէ նոր հասած բազմաթիւ նորաձեւար գործիքներով, Պ. Ն. ԱՆՏՐԻՓ. ՄԷՆՕ ինքն անձամբ կը հանէ իւր բազմաթիւ յաճախորդաց պատկերները: Յաճախորդներն կատարելապէս գոհացնելու համար, յանձնարարուած լուսանկարներու ՕՐԻՆԱԿԻՆ ցոյց կը տրուի նախապէս, և եթէ չհաւանութիւն, մինչև կրկին անգամ կը լուսանկարուի, մինչև որ հաւանութիւն գիշորութիւն մը զոր մայրաքաղաքէն ո՛չ մի լուսանկարիչ յանձնակալու: Կազմարարները մեր բազմաթիւ յաճախորդաց որ, ինչպէս յստակ և պայծառ օրեր, նոյնպէս և ամպոտ և մառախլապատ օրեր լուսանկարք կը հանուին ամենայն զգուշանալ կարգ մը շնորհիւ նոր դիւտերու:

Կը խնդրուի զգուշանալ կարգ մը շնորհիւ լուսանկարիչներէ որք կը գործեն մեր անուամբ:

6—12

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ

(Ընտանեաց ապագայն)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԸՆԿ.

ՎԱՍՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵԱՆ

ԴՐԱՄԱԴԼԵՈՑ

Կը գործէ ընդ հսկողութեամբ Գաղղիոյ կառավարութեան

Կեդրոնատեղի՝ 61, Բէփիւսլիք փողոց, Լիոն (Ֆրանսա)

Ապահովութեամբ 100,000.000 ֆր.

ԼԱՎԸՆԻՌ ՏԷ ՓԱՄԻՅԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, որ հաստատուած է նպաստելու համար փոքր խնայողութեանց, արագ զարգացում մը ունեցած է: Իւր նպատակն է որոշեալ պայմանաժամի մէջ վերականգնել դրամադրութիւն:

Ընկերութեան գործառնութիւնք բազմադիմի են, ինչպէս շարժական արժէքի և փոխարժեքի դրամադրութիւն, կորուստեալ դրամագրութիւն մը վերականգնութիւն: Նրախաւորութիւնք և Գլխավարք՝ փոխառութեանց և ճարտարութեանց և վաճառականութեան մէջ գործածուած դրամադրութիւն, մանկանց համար օժիտք, հանգստեան անտուկ ծերութեան համար, ցկեանս եկամուտներու կազմութիւն, ի մի բան այն ամէն գործառնութիւնք որոց նպատակն է խնայողութիւն: Ընկերութեան Պոլսոյ գործակալութիւնն սկսած է 1884 Յունուար 1էն:

Տեղեկութեանց եւ բաժանորդագրութեան համար դիմել առ Բարսեղ Էֆէնտի Թէլլաեան, գործակալ Ընկերութեան ի Կ. Պոլիս, Պահճէ—Գարու, Շէյխ—Իսլամ խան, Թիւ 11:

LE CONSEILLER DES MÈRES ET DES JEUNES FILLES

Կը հրատարակուի ի Բարիզ իւրաքանչիւր ամսոյ 1ին և 15ին «Մաղիկի» դիրքով և պատկերազարդ: Ներկայ տարւոյս սկիզբէն մտած է իւր 11րդ տարին: Տարեկան բաժանորդագրինն է Թուրքիոյ համար 15 ֆրանք, Բաժանորդագրուիլ փափագողք պէտք է դիմեն «Մաղիկի» Յանձնակատարութեան գրասենեակին, 15 ֆրանքի փոխարէն զրկելով 75 դրոշ:

ԱՐԵԻՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ, Ամառութեան Ազգ. Գրական եւ Բաղադրական. ԽՐՄ. Բազիր-Հրատարակիչ՝ Մատթէոս Մամուրեան: Տարեկան բաժանորդագրինն է 80 դրշ. Ազգ. ուսուցչաց համար 50 դրշ. Բաժանորդագրութեան համար կառուի է դիմել «Մաղիկի» ԽՐՄագրութեան

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

درعليه ده بغيچه قپوسنده طاش خاندنه
 .. نومروده « زاغيك » غزتهسى مديرى
 بالاقاشيان حوونان

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Բ. ՏԱՐԻ. ԹԻԻ 20

ՇԱԲԱԹ

29 ՓԵՏՐՈՒԱՐ 1892

ԾՈՐՊ ՏԱՐԵԴԱՐՁ

Ծ Ն Ն Դ Ե Ա Ն

ՎԵՋ. ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԿԼ-ՀԱՄԻՏ Բ. ԲԱՐԵԽՆԱՍ ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐԲԻՈՅ

Արդարակորով Վեհապետի մը ծննդեան տարեդարձի օրն մին է այն նշանաւոր օրերէն՝ յորս բազում խորհրդածութեանց մէջ կը խորասուզիմք։ Մամուլն շատ անգամներ բիրտաւոր բերաններով առիթ կ'ունենայ հոչակել այն մեծագործութիւններ, որով մեր սիրեցեալ Վեհապետն կը հանդիսանայ իբրեւ նոր ոմն Սեփոսիս, որոյ արուրիւնք ոչ թէ եգիպտական բուրգերու վրայ դրոճուած են, այլ միլիոնաւոր հպատակաց արտերու մէջ խորասիւղ արձանագրուած են։

Արժան է որ բազմիցս կրկնեմք թէ Օգոստոսիան ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. նշանաւոր Հօր արտով կը գուրգուրայ իւր բազմաթիւ որդւոց վրայ՝ որք ամէն ժամ եռանդազին օրհնութիւններ կը վերադառնան յերկինս վասն արեւածաթեան Ն. Կ. Վեհապետութեան։

«Ծաղիկ» եւս, զկար արձագանգ իւր ընթերցողաց եւ Հայ ժողովրդեան, քաղցր պարտականութիւն կը համարի թարգման հանդիսանալ միլիոնաւոր հպատակաց հաւատարմական զգացմանց եւ ձայնակցիլ անոնց հետ, գոչելով ընդ միջս՝ կեցնէ՝ ՕԳՈՍՏՈՍԻԱՆ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ Բ. ՄԵԾԱՓԱՆ ԿԱՅՍԵՐ ԹՈՒՐԲԻՈՅ։



❖ ولادت باهر السعادت حضرت شهنشاهیلری ❖

❖ ملابسہ سیلہ منظومہ مملوکانہ مدر ❖

ای خورشید حیات بخشا ای سایه رب خدا
 ظلمت ظلم و جهالت عصر نده هب اولدی جدا
 منبع جود و کرم له اولدی لبریز ارض و سما

سر تا سر بیوایکانه چاره رسدر همتك
 پادشاهم تا ابد وار اولسون عمر و شوكتك

بو کون طوغان مهر رخشان بر احسان رب منادر
 سراپا یر یوزی روی سایه پرتو افشاندر
 بو بر حسن تصادفدر بو بر اقباله برهادر

سر تا سر بیوایکانه چاره رسدر همتك
 پادشاهم تا ابد وار اولسون عمر و شوكتك

بختيار در همتكه بو کون دولت عثمانیان
 فخر ایدیور سطوتكه هر دم ملت ارمینیان
 دائم الاوقات مدح ایدیور اجلانی هب عالمیان

سر تا سر بیوایکانه چاره رسدر همتك
 پادشاهم تا ابد وار اولسون عمر و شوكتك

برخنکار سیرت ملکسین ای خسرو حیدر شعار
 اول سریر سلطنتده عافیتله اول بر قرار
 ورد خاص کترانهك (ذکی) بو در لیل و نهار



ՄԵՐ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Մեր ընտանեկան կեանքը արժանի է լուրջ ուսումնասիրութեան. ժամանակէ մ'ի վեր՝ ա՛յն ժամանակէն երբ եւրոպեան քաղաքակրթութեան նրբութիւնները աւելցին սրբեցին հին բարի ժամանակաց պարզ ու նահապետական կենցաղավարութիւնը, ամէն բերնէ տըրտունջներ սկսած են լուրիւ դժգոհութեան ձայները հեռզհեռէ կը շատնան և մանաւանդ վերջին տարիներս խլացուցիչ հանգամանք մը ստացած են:

Ամէն ոք կը գանգատի թէ, ժամանակիս բազմաթիւ պահանջները անկարելի կ'ընեն ընտանեկան բարեկեցութիւնը և գրեթէ շարունակ ցաւալի գոտութեանց սուրճ կուտան, թէ սոյն պահանջները գոհացնելու ապիկարութիւնը յաճախ ամենէն ոխերիմ թշնամիներ կը հանդիսացնէ այրն ու կինը, որք մինչև իսկ երբեմն իրարմէ բաժնուելու կը հարկադրուին և կամ կը գտնուին այնպիսի վարմանց մէջ, զորս վեհանձն բարոյականը պիտի դատաւարտէր:

Այսպիսի գանգատներու բերմամբ ամէն մարդ կը փախչի ընտանիք կազմելու գաղափարէն, ինչպէս պիտի փախչէր ճիւղէ մը: Ամուսնութիւն. — Ո՛հ, այդ կատարեալ յիմարութիւն կը նկատուի, ո՛չ թէ վասն զի աղջկունք սէր չեն ներշնչեր, ո՛չ թէ վասն զի երիտասարդք իրենց ազատութիւնը կորսնցընելէ կ'երկնչին, ո՛չ թէ վասն զի ամուսնական կենաց քաղցրութեանը տներդայ են, այլ որովհետեւ այդ նոր կեանքին, այդ նոր աշխարհքին վրայ շատ անստույգ, շատ երկչոտ, շատ ահաբեկիչ գաղափար մ'ունին, երիտասարդ ամուսիններ, ամենամեծ մասամբ, իրենց ամուրի բարեկամաց տկանները կը խլացնեն կեանքի դառնութեան տըլտուր նկարագրութիւններով և կ'երգմընեցնեն բնաւ աշխարհքի անունը չը տալ, ազատ ասլիք, հոգերէ գերծ մընալ, և այլն: Զգիտեմ տեսնուած է, ասոր հակառակ, ամուսին մ'ալ որ իւր ներքին կենաց երջանկութիւնը, անդորրութիւնը զմայլմամբ գրուած է իւր բարեկամին:

Թառաջ բերուած տրտունջները երկու որոշ դասակարգի կը բաժնուին. — նիւթական և բարոյական:

Ամենացաւալի իրողութիւն մ'է որ մարդիկ իրենց հաճոյից համար կը ծախսեն շատ աւելի քան իրենց կենսական պիտոյից. անշուշտ հաճոյքը չենք անգոսնէր և մինչև իսկ կը յայտարարենք ալ թէ հաճոյքն, իւր սահմանին մէջ, բանական մարդուն համար պէտք մ'է. բայց երբ իւր սահմանը կ'անցնի՝ կա-

տարեալ շուայութիւն կը դառնայ այն. այս է ահա ամուսնոց ամենամեծ մասին գանգատը իրենց կանանց նկատմամբ. շուայ են անոնք մասնաւորաբար իրենց հաճոյքներուն մէջ, և այս՝ կարծեմք՝ կատարելապէս ստույգ է: Առէք մի և նոյն նիւթական կացութեան տէր երիտասարդ մը և օրիորդ մը, կամ օրինակը աւելի զօրաւոր ընծայելու համար, ենթադրեցէք որ օրիորդին նիւթական վիճակն աւելի ստորին լինի քան երիտասարդինը. ամուսնացուցէք զանոնք իրարու հետ. բացառութիւնները միշտ յարգելով հանդերձ՝ սխալած չեմք լինիր, երբ յայտարարեմք թէ Օրիորդը պիտի դուռ բանայ ա՛յնպիսի ծախքերու, որոց իւրաքանչիւրը մէկ մէկ ծանր հարուած կրնայ նկատուիլ իրենց նիւթական կացութեան. նա չպիտի յիշէ բնաւ այն համեմատ վիճակը յորում կը գտնուէր մայրենական յարկին մէջ. նա չպիտի ուզէ ո՛չ իսկ որոշ գաղափար մը կողմէ իւր ամուսնոյն նիւթական վիճակին նկատմամբ. նա պիտի շարունակէ պահանջել ինչ որ հարուստ դասակարգն անիւթթօրէն և առանց նեղուելու կը ծախսէ իւր քաջահաճոյից: Առաջ՝ դեռ չամուսնացած, ինքը թերևս յօժարէր տան աշխատութիւնները իւր ձեռք տեսնել, աւելի, սրբել, կերակուր եփել. հիմա որ ամուսնացած է՝ ինքնը եղած է՝ ամբողջ ուր այդ անարգ ծառայութիւններն ինքը կատարէ: Խիստ աղքատ ընտանեաց վերարկերու աղջիկներ կան որք շատ բնական կը համարին որ ամուսին մը անպատճառ գոնէ սպասուէր մ'ունենայ, որպէս զի կինը հանգիստ մնայ: Այս ինչին կինը տեսէք, ի՞նչպէս հաճիքս է, զաւակներն իսկ իւր խնամոց յանձնուած չեն, զինքը չեն ձանձրացներ, մասնաւորապէս նին որ իրենց ամէն պէտքերը կը հոգայ. քանի՜ երանի եթէ մեր տիկինն ալ իւր զաւակաց համար մասնաւորապէս մը ունենար:

Ամուսինը չկատարեց իւր կնոջ քրմահաճոյքներն, չգոհացուց անոր սպասուիչ փափագները, ամէն գիշեր կող, կռիւ, սրտեղութիւն, յանդիմանութիւն: Օրն ի բուն կենաց ովկէանոսին ալեաց խաղալիք, խեղճ ամուսինը երբ երկոյնն ու ժառանգութեան կը դառնայ փոքր ինչ ընտանեկան երջանկութիւն վայելելու, և ահա՝ գանգատներու, պահանջումներու շարքը կ'սկսի և թըշուռաւ մարդը կը շուարի կը մնայ ու դառնութեամբ կ'անդրադառնայ թէ այս էր այն փրկարար նաւահանգիստն ուր կը յուսար ապաստանիլ կենաց ամենօրեայ ալեկոծութենէն յետոյ:

Կնոջ պահանջումներն երբ մնան անպատասխանի, ո՛չ միայն ընտանեկան

բարեկեցութիւնը կը խանգարի անհամաձայնութեամբ, այլ երբեմն ընտանեկան պատիւն ալ կ'արատաւորի ա՛յնպիսի վրէժխնդրութեամբ մը որ իւր տեսակին մէջ ամենէն սոսկալին է և զոր կանայք միայն գիտեն ի գործ դնել...

Այն կիներն որք այսպիսի դժբաղդութեանց պատճառ կը լինին, բնաւ չեն ըմբռներ թէ ընկերականութիւնը դասակարգերու կը բաժնուի. ամենք հարուստ, այլք միջակ կարողութեան տէր, և ուրիշներ ալ աղքատ են. աղքատը միջակ դասակարգին ծախքը չէ կարող ընել, ինչպէս միջակ դասակարգը՝ հարուստին ծախքը. իւրաքանչիւրը իւր վիճակին մէջ շարժելու է և բնաւ անպատճառութիւն կամ ամօթ չէ երբ հարուստին պէս չկարենաք հագուիլ, չքուել ու կեր ու խում ընել. պարագայներն զմեզ ո՛ր դասակարգին մէջ որ դրած են՝ ա՛յն դասակարգի շրջանակին յարմարեցնելու եմք մեր ապրելու եղանակը: Ո՛վ պիտի սովորեցնէ զայս աղջիկանց...

Բարոյական տրտունջն, որ յաճախ կը լուրի, ունի իւր ստորաբաժանումներն. աղջիկ մը երիտասարդի մը հետ ամուսնանալէ յետոյ զնա բաւական վայելուչ չգտնէր, կամ իւր գաղափարները, իւր մտքի զարգացումն, իւր գործերու եղանակը չեն համապատասխաներ ամուսնոյն. կռիւն անխուսափելի է: Հոս յանցանքին մէկ մասը կը ծանրանայ ծնողաց, միւս մասը ամուսնացելոց վրայ: Կան ծնողներ, որք իրենց աղջիկները ամուսնացնելու եռանդէն մղուած՝ այնչափ կ'աճապարեն օր առաջ գլուխ գլխի տալու որ, առանց իրենց աղջկանց ազատ կամքն առնելու, կ'ամուսնացնեն զանոնք այնպիսի երիտասարդաց հետ՝ որոց տարիքի, վայելչութեան և մտաւոր զարգացման աստիճանը բնաւ չհամապատասխանէր իրենց աղջկանց տարիքին, գեղոյն և զարգացման. այսպիսի ամուսնութիւններ ամէն օր մեր աչքին առջև կը պատահին և չէ եղած ժամանակ մը որ անոնք խիստ դժբաղդ հետեանքներ չունենան... Հարուստ է, ահա դիւթական բառն որ աղջկան մօրը ականջը կը չոյլ. թո՛ղ հարուստ լինի, հոգ չէ որ տարեց, տղեղ, անուս, անկիրթ, գինեմուլ և մինչև իսկ ոճրագործ լինի, հարուստ է, օր քան զոր ինքզինքը հարկաւ կը շտկէ, իրեքը գլուխը կուգայ: Քանի՜ քանի՜ մայրեր իրենց աղջկանց գերեզմանները փորած են այս կերպով և յետոյ անոնց ամուսնոյն հարստութենէն ոսկիէ դամբարաններ կանգնած անոնց վրայ...

Բայց աղջիկներ ալ կան, որք ամուսնանալու աճապարանքէն մղուած կամ

դարձեալ չլացուցիչ ոսկիներու պարգևելիք գերակշիռ հաճոյքներէն կուրացած՝ իրենց կատարեալ հաւանութեամբ կ'ընտրեն իրենց ամուսինները և յետոյ-անոնց չեն հաւելիր. ասոր ի՞նչ ըսենք...

Ի նկատ առնելով եղած տրտուռները՝ մենք միշտ սա եզրակացութեան կը յանգինք թէ ընտանեկան ցաւալի գծաւորութեանց գլխաւոր պատճառը տրգիտութիւնն է. ի հարկէ ամէն տգէտ աղջիկ պահանջկոտ կտմ' անզգաստ չը լինիր. սակայն և այնպէս, մեր բարոյական բնազդներն և ընդածին պարկեշտութիւնն ի հաշիւ առնելով հանդերձ՝ դարձեալ կատարելապէս ստոյգ է որ տգէտը մուլիին մէջ կը քալէ և կարող չէ ըմբռնել կարգ մը տարրական ճշմարտութիւններ՝ որոց լիովին խելամուտ լինելու համար զարգացեալ, մըշակեալ միտք մը անհրաժեշտ է. բայց արի տես որ ժամանակէ մ'ի վեր մամուլը մէջ թեր ու դէմ կարծիքներ կը յայտնուին այս մասին. հրապարակագիրք ոմանք, և անոնցմէ աւելի երիտասարդաց մայրերը, կը վախճան ուսեալ աղջիկներէն. անոնք նախամեծար կը համարին տգէտ քան թէ զարգացեալ աղջիկը. մին խոնարհ, իսկ միւսը վերին աստիճանի ամբարտաւան կը լինի կ'ըսեն. տգէտը բազմաթիւ աւելի տրամագիր է ընտանեկան աշխատութիւնով պարապելու, մինչդեռ ուսեալը ձեռքը մոխիրը չթաթիւր, գրիչէն, թղթէն և իւր արդուզարդէն զատ ուրիշ բանի չմտածէր կ'ըսեն:

Այս համոզումն, որքան որ տեսականին մէջ տրամաբանական սխալ մը, գործնականին մէջ շատ ու շատ իրաւացի է սակայն: Ի՞նչ ուրեմն, դաստիարակութիւն, որմէ այնչափ բարիքներ կ'ակնկալեմք և զոր միակ դարմանը կը նկատեմք այն ընտանեկան դժբաղդութեանց որոց վրայ պահ մ'առաջ խօսեցանք, միթէ ճիշդ հակառակ արդիւնք տալու սահմանեալ է. միթէ օր մը բոլոր աղջկանց վարժարանները փակելու հարկին մէջ պիտի գտնուինք. միթէ վերջապէս դաստիարակութիւնը այնչափ ներհակ ներգործութիւն ունի երկու տարբեր սեւերու վրայ:

Թէ արդի դաստիարակեալ նախառնաձ աղջկունք շատ մը պարագայից մէջ մեծաւ մասամբ աւելի վտանգաւոր առարկայներ են քան իրենց տգէտ սեռակիցները՝ զայդ չէ կարելի ուրանալ. բայց թէ ասոր պատճառը դաստիարակութիւնն է՝ ահա՛ մեր ամենամեծ սըխալն. ասոր պատճառը ո՛չ թէ դաստիարակութիւնը՝ այլ դաստիարակութեան սխալ ըմբռնումն կամ անոր բացակայութիւնն է:

Մենք ի՞նչ կը սովորեցնեմք մեր աղջիկներուն. — քիչ մը հայերէն, քիչ մը ֆրանսերէն կամ անգլիերէն, մէյմէկ քիչ ամէն ուրիւններէն և դաշնակ: Ի՞նչ կ'սպասեմք տրուած այս անիմաստ կրթութենէն...

Սովորեցուցած եմք երբէք մեր աղջկանց թէ աթլասուքիւնը կեանքէն անբաժան է. թէ երբ շարժում չկայ՝ կեանք ալ չկայ. թէ աւելի ձեռք առնուլ, իւր ճերմակեղէնները կարել, իւր կերակուրը ձեռքովը պատրաստելը, իւր զաւակաց ամէնէն աննշան պէտքերն անգամ իւր իսկ ձեռքով հոգալը ո՛չ թէ միայն երեսին աղտ մը չեն բերեր, ո՛չ թէ միայն բարձր, մշակեալ մտաց համար նուաստացուցիչ բնութիւն չունին, այլ պարկեշտ, հումեստ և առաքինի աղջկան մը սրբազան պարտականութիւնը կը կազմեն. մենք սովորեցուցած եմք նոցա թէ մարդ ազատ կամք ունի և հետեւաբար իւր տալիք որոշմանց, իւր մէն մի գործողութեանն համար կատարեալ պատասխանատուութիւն կ'ստանանք, և թէ իւր մէկ յանցանքին համար մեղմացուցիչ պարագայներ, չինծու չըմեղանքներ փնտրուելը վատերու և անբարոյական (բառին ընդարձակ առմամբ) մարդոց բաժինն է. մենք բացատրած եմք անոնց թէ ի՞նչ է սէրը, թէ ո՛ւր է անոր անսահման տարբերութիւնը պարզ հաճոյքէն. թէ երբ մարդկութեան ու Աստուծոյ առջև յանձն կ'առնուինք մարդ մը սիրել (այսինքն երբ անոր հետ կ'ամուսնանամք), մեր ամենէն նուիրական պարտականութիւնն է մինչև մեր վերջին շունչը յարատեւել յայնմ և ամէն խոշնդոտներու առջև դիւցազնական արիութիւն ցոյց տալ. մենք երբէք բացատրած եմք անոնց թէ այլ է վայելք, այլ է երջանկութիւնը. թէ առաջինը շատ անգամ ոսկիով կը գլուխուրդէ, իսկ երկրորդին մէջ անիրաւ մանուկներ երբէք գործ չունի, այլ երկուստեք գաղափարաց և զգացմանց համերաշխութեան մէջ կը կայանայ, ուստի երբ ընտրութիւն մ'ընեմք՝ կենսականը պարտիմք և եթ առնուլ ի հաշիւ և չվազել ստուերին ետեւէն, թէ բարոյական գեղեցկութիւնը նախընտրելի է քան ֆիզիքականը, թէ աղնիւ և գեղեցիկ սիրտ մը հազար անգամ աւելի կ'արժէ քան գեղանի և հրապուրիչ դէմք մը:

Մենք ուսուցած եմք իրենց թէ ամէն մայր ընտանիքի զարդը և հոգին լինելէ զատ հանրային գործիչ մ'ալ է, զի զաւակներ պիտի տայ աղջին, որք իւր ներշնչմանց, իւր տուած կրթութեան ուղղակի ազդեցութեան ներքև պիտի մտնեն, և թէ քանի՛ սրբազան

պարտականութիւններ ունին մարդ իրենց զաւակները այնպիսի հոգեշունչ զգացումներով, այնպիսի ուղղամիտ սկզբունքներով օժտելու՝ որոց շնորհիւ կարող լինին նոքա իրենց ընտանիքին և իրենց պատկանած աղջին օգտակար անդամներ հանդիսանալ: Ի մի բան, մեր վարժարանները կուտա՞ն մեր աղջկանց ողջամիտ բարոյականի (միշտ բառին ընդարձակ առմամբ) վրայ հիմնեալ կրթութիւն մը, որ կը կոչուի դաստիարակութիւն:

Բայց ինչպէս տեսանք՝ մենք մեր աղջիկները չեմք դաստիարակեր, անոնց մտաւոր կարողութիւնը բարոյականի հիման վրայ չեմք մշակել, այլ իրենց երեւակայութիւնը կը փթացնեմք կամ կը բորբոքեմք կարգ մը վերացական, անպէտ, վնասակար գաղափարներով. մենք միայն այնպիսի կրթութիւն մը կուտամք նոցա՝ որ երբ վարժարանէն ելնեն, իրենց պարագայ ժամանակը, կամ աւելի ճիշդը, ամբողջ ժամանակը վէպերու ընթերցանութեամբ կ'անցունեն: Այլ է ուսում առնուլ, այլ է դաստիարակուիլ:

Հիմայ կը հասկնամք թէ ի՞նչու կարելի չէ երջանիկ ընտանիքներ կազմել այս նկարագրով աղջիկներէ. մեր մէջ թէ՛ տգէտ և թէ՛ ուսեալ աղջիկները վտանգաւոր են. ուսեալները, սակայն, տգէտներէն աւելի:

Յանցանքը մեզին է թէ աղջիկներունը...

18 փետր. 1892

Մաքրիգիւղ

... Խմբագիր,

Սկիւտարու մէջ հաստատեալ Հայկազեան անուն դպրոցին տնօրէնը այս օրերս իւր վարժարանին մի ազգարարութիւնը հրապարակ հաներ է, որուն ուսուցչական մարմնոյն մէջ զարմանօք կը տեսնեմ իմ անունս, իբր թէ Նոր տարին սկսեալ պաշտօն պիտի սկսիմ վարել իւր դպրատան մէջ:

Թէև յիշեալ վարժարանին Տնօրէնը անցեալ տարւոյ Հոկտեմբեր ամսոյ մէջ ինձ հետ տեսնուած լինելով փափաքած էր որ իւր վարժարանին գծադրութեան դասերն ստանանեմ, սակայն չեմ գիտեր ինչ պատճառաւ յայնժամ չլիջեց զիս: Արդ, ... Խմբագիր, կարի անհեթեթ նկատելով, առանց իմ յանձնառութիւնս առնելու, իւր հրատարակած ազգարարութեան մէջ և իմ անունս դրնելը, կուգամ հրապարակաւ յայտնել թէ ո՛չ պաշտօն կը վարեմ Սկիւտարու մէջ հաստատուած Հայկազեան անուն մասնաւոր վարժարանին մէջ և ոչ ալ տրամագիր եմ վարելու ինչ ինչ անյիշելի պատճառներով:

Մնամ խորին յարգանքս Վ. ԲԱՐՍԵՆԱՆՅԱՆ

Յ. Գ. — Սոյն նամակ թէև գրուած էր տարւոյս սկիզբը, սակայն հիշեալ դպրութեան պատճառաւ չհրապարակուիմք մինչև ցարդ: Արդ, կը խնդրեմ, Խմբագիր Տէր, որ հաճիք հրատարակել զայս Ձեր լրագրոյն մի անկիւնը: Նոյն

ԲԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՎՆԱՍՆԵՐԸ

— Գամիկ աղա, այս իրիկուն կե-
րակուրը մէկտեղ ուտենք։
— Շնորհակալ եմ, Մարկոս աղա,
բայց չեմ կրնար գալ, որովհետեւ ու-
րիշ տուն մը հրաւիրուած եմ։
— Կ'աղաչեմ։
— Կը խնդրեմ։
— Խօսքս մի՛ կտորեր։
— Մի՛ ըներ։
— Ձէ մի՛ ըներ։
— Մի՛ ստիպեր։
— Ի՞նչ կ'ըլլայ, մէկտեղ ժամանակ
կ'անցունեմք քիչ մը։
— Աղէկ, բայց...
— Բայցս ալ ի՞նչ է, երթանք։
— Որովհետեւ այսչափ կ'ստիպես
կոր, ես ալ չեմ մերժեր։ Երթանք։
— Կեցցես Գամիկ աղա, շնորհա-
կալ եմ։
— Ես ալ շնորհակալ եմ։
Այս խօսակցութիւնը տեղի կ'ունե-
նար Բերա մեծ փողոց գինետան մ'առ-
ջեւ։
Մարկոս աղան հրաւերն ընդունել
տալուն պէս բարեկամին ձեռքէն բռ-
նեց և գինետունը տարաւ։
— Մասթիքա՞ կը խմէք։
— Ոչ։
— Անանկ է նէ տիւզ կը գործածէք։
— Ոչ։
— Բօ՞մ։
— Ոչ։
— Ըսել է թէ գօնեաք կը խմէք։
— Ոչ։
— Ի՞նչ կը խմէք ուրեմն։
— Ոչինչ։ չիյտէ՞ք, քանի մը տարի
կայ որ ես ըմպելիք չեմ գործածեր։
— Ըմպելիք չե՞ս գործածեր։
— Ոչ։
— Ոտքդ սլաքենեմ։
— Ոչ։
— Իրա՞ն վ'ըսես։
— Ինչո՞ւ սուտ խօսիմ։
— Աստուածդ սիրես։
— Ձեմ խմեր։
— Կատա՞կ կ'ընես հետս։
— Ի՞նչ հարկ կայ կատակ ընելու։
— Հիմա մասթիքա չե՞ս խմեր դուն։
— Ոչ։
— Տի՛ւզ։
— Ոչ։
— Բօ՞մ։
— Ոչ։
— Գօնեա՞ք։
— Ոչ։
— Ինչո՞ւ կ'ապրիս կոր ուրեմն, կը
սոսայ յաճախորդներէն մին, լեցնե-
լով գաւաթը։
— Կը խմէ, կը խմէ, կատակ կ'ընէ
կոր, կը պատասխանէ Մարկոս աղան։

— Ձեմ խմեր, Մարկոս աղա։

— Ասոթ է, աղբար, չխմել կ'ըլ-
լայ, լսուած բա՞ն է, նստողները վը-
րանուս խնդացնե՞նք պիտի։

— Սովորութիւն չունիմ, եղբայր,
ինչո՞ւ կ'ստիպէք։

— Կնիկ ես, ի՞նչ ես, պէ մարդ,
օղին չ'սմուիր, կ'ըսէ մին։

— Բերնին համը ի՞նչ գիտէ անի-
կայ, կը յարէ ոմն։

— Պարզ մարդ մ'է, կ'ըսէ երրորդ
մը։

— Ճգնաւոր, կը պօռայ ուրիշ մը։

— Հա, հա, հա, օղի չխմեր եղբր,
վայ ապուշ վայ, կը թոթովէ գինե-
մու մը խնդալով։

— Կը խնդրեմ, Գամիկ աղա, վեր-
ջացնեք սա խաղը, կ'ըսէ Մարկոս ա-
ղան։

— Ի՞նչ ընեմ։

— Գաւաթ մը միայն խմէ՛։ Մեզի
չի՛ մը մասթիքա բերէք։

— Գաւաթ մը կը խմեմ խաթերդ
համար։

— Շնորհակալ եմ, ժամանակին յար-
մարելու է, չխմողի վրայ կը խնդան հոս,
թող որ չխմելն ալ սղաղ բան մ'է։

— Շատ աղէկ։

— Հրամայեցէ՛ք։

— Կենդանութիւն։

— Անուշ։

Գամիկ աղան կ'ստիպուի քանի մը
գաւաթ, եւս խմել գայթակղութիւն
չպատճառելու համար արբեցողաց մէջ։

Ժամը տառեկութիւն կը մօտենայ։
Գամիկ աղան անօթի է, ամէն երեկոյ
սովորած է ընթրել առ առաւելն ժամը
կէսին։

— Ելլենք, Մարկոս աղա, եթէ կը
հաճիք, կ'ըսէ Գամիկ աղան։

— Դեռ կանուխ է։

— Տասներկուքին մօտեցաւ։

— Առածը չիյտե՞ս. միսափիր է՛վ
սահիպանին գուզուսու տուր։

— Գիտեմ, բայց...։

— Իմ կըտաս չլմնացաւ դեռ։ Ճիշդ
երկու շիշ պիտի ըլլայ։

— Շատ աղէկ։

Մարկոս աղան կը շարունակէ իւր
կըսան և Գամիկ աղան իւր անօթու-
թիւնը։

— Ժամը մինչեւ քանի՞ն պիտի նըս-
տինք հոս, Մարկոս աղա։

— Ինչո՞ւ կ'աճապարես կոր, բարե-
կամ, նստինք, խօսինք. տուն երթանք
ի՞նչ ընենք հիմա. այս ատեն կերակուր
կ'ուտուի՞, անասունները կ'ուտեն հի-
մա... ի՞նչ... անօթի ես դուն։

— Ձէ, չէ, բնաւ չէ։

— Եթէ անօթի ես, երթանք։

— Ձէ, այս ատեն կերակուր կ'ու-
տուի՞։

— Շիտակ գրուցէ՛, կ'աղաչեմ, ես
կուզեմ որ էլլենմիւ ըլլաս դուն, ֆե-
րանիսմիւ ըլլաս... չէ նէ, ի՞նչ հաս-
կըցայ... ես կ'ուզեմ որ հիւրս ֆէյֆ-
լենմիւ ըլլայ... երթանք թէ որ ան-
թի ես...։

— Ձէ, չէ, բնաւ չէ։

— Կը կրկնեմ, եթէ անօթի ես եր-
թանք։

— Ձէ, այս ատեն կերակուր կ'ու-
տուի՞։

— Կը կրկնեմ, շիտակ գրուցէ՛, կ'ա-
ղաչեմ, ես կ'ուզեմ որ էլլենմիւ ըլլաս
դուն, ֆերանիսմիւ ըլլաս... չէ նէ,
ի՞նչ հասկցայ... ես կ'ուզեմ որ հիւրս
ֆէյֆլենմիւ ըլլայ... երթանք թէ որ ա-
նօթի ես...։

— Անօթի չեմ։

— Խօսէ՛, ուրեմն, բան մը պատմէ,
արձանի պէս ինչո՞ւ մուռլ կեցեր ես։
Կենդանութիւն։

— Անուշ անմահութիւն։

— Հատ մ'ալ քեզի տամ։

— Ձէ, գլուխս կը դառնայ կոր։

— Խօսէ՛ նայիմ, Կենդանութիւն։

— Անուշ։

— Գործ մ'ունէիր նէ, ինչ ըրիր ան։

— Ո՞ր գործը։

— Որն ըլլայ նէ, ըլլայ, գործ մ'ըլ-
լայ տէ, մէրամ ժամանակ անցունել
չէ՞ մի։

— Անանկ է ես։

— Չխօսի՞ս, աղբար. գիշերներն ալ
ի՞նչպէս ժամանակ կ'անցունէք կոր,
ցերեկներն ի՞նչ կ'ընէք կոր, առտու-
ները ինչո՞վ կ'զրադիք կոր։

— (Մէկուսի) Անօթութենէ մարե-
լիք կուգայ կոր վրաս։

— Ինչպէ՞ս եղաւ նայինք այդ գործը։

— Մեղքոնին գործը։

— Հա Մեղքոնին գործը, (Մէկուսի)
պարէ գիտնա՞մ...։

— Մեղքոնը յանցաւոր էր այդ գոր-
ծին մէջ. (Մէկուսի) Ժամ մ'առաջ եր-
թայինք ու սեղան նստէինք։

— Իրա՞ն կ'ըսես, վայ անպիտան
վայ, վայ, Մեղքոնէն չէի յուսար. (Մէ-
կուսի) — պարէ ճանչնա՞մ։

— Չար տղայ է։

— Անպիտան. պատմէ նայինք։

— Երկար է պատմութիւնը. (Մէ-
կուսի) Գայլի մը պէս անօթի եմ։

— Թող երկար ըլլայ, առամ. (Մէ-
կուսի) Սըւիկայ քիչ մը խօսիլ տամ որ,
բացուի, կը նեղանայ կոր զաւալը մար-
դը։

— Հիմա չեմ կրնար պատմել, (Մէ-
կուսի) Անօթի փորանց։

— Կենդանութիւն անանկ է նէ։

— Անուշ, ժամը մէկ է։

— Շատ աղէկ, կ'երթանք։ Սա հա-
չիւս մաքրեմ։

Մարկոս աղան հաշիւը մաքրելու վճարողի. Գամիկ աղան ինքզինքը գինեւորունէն դուրս կը նետէ և փողոցին մէջ կ'սպասէ Մարկոս աղային որ վերջին գաւաթները կը խմէ մի ըստ միովէ :

Գամիկ աղան քառորդի մը չափ կ'ըստպասէ փողոցին մէջ և յետոյ գինեւորան սեմին վրայ կ'եւէ ու կը կանչէ Մարկոս աղան :

— Մարկոս աղա, ուշ մնացինք :

— Կուգամ կոր :

Գամիկ աղան քառորդ մ'ալ կ'սպասէ. համբերութիւնը հատնելու վրայ է, կ'ուզէ մեկնիլ, բայց քաղաքավարութիւնը չթողուր : Ուստի նորէն կը կանչէ :

— Մարկոս աղա, Մարկոս աղա, երթանք :

— Հիմա :

Գինեւորուն հիմա'յն առ նուազն քառորդ ժամ է :

— Մարկոս աղա, երկար ըրիր :

— Եկայ :

Գինեւորուն եկայն՝ պիտի դամ է :

— Մարկոս աղա :

— Կ'աղաչեմ, քիչ մը... ներս եկուր մէկտեղ ելլենք :

— Չեմ գար :

— Եկուր :

— Ոչ :

— Կը բարկանամ :

— Բայց պիտի երթանք :

— Այո :

— Ահա եկայ :

— Կարծեմ քեզի սպասցուցի քիչ մը :

— Վնաս չունի :

— Քեզի տեսայ, չիտես ո'րչափ գոհ եղայ, այս իրիկուն էլ յիս քեզի պարտական եմ. ոտքի վրայ հատ մը կը տնկեմ :

— Չէ, երթանք :

— Շատ աղէկ, երթանք : Կենդանութիւն :

— Անուշ, երթանք :

— Այո, երթանք :

— Երկու բարեկամները ճամբայ կ'եւեն և քանի մը փողոց դառնալէն յետոյ տուն կը հասնին :

— Վայ, Գամիկ աղա, հրամայեցք, ըսելով հիւրը վեր կը հրամայէ Մարկոս աղային տիկինն որ խնամուներես և քիչ մ'ալ սիրտը չվիրաւորուի, շատախօս է :

— Գամիկ աղան հիւր բերի, տիկին :

— Շատ աղէկ ըրիր, վայ Գամիկ աղա վայ :

— Բարի եկաք, կ'ըսեն Մարկոս աղային աղջիկներն. Գամիկ աղային ու աւոր ձեռքը կը թօթուեն :

Գամիկ աղան աչքերով սեղան կը փնտռէ :

— Վայ Գամիկ աղա վայ, է տահա ի՞նչու ես նայինք :

— Փառք Աստուծոյ, տիկին, դուք ի՞նչու եք :

— Ձեզի տեսանք աւելի աղէկ եղանք, վայ Գամիկ աղա վայ, դուն ալ հոս պիտի գաս եղեր :

— Սա բախըյի քէփսին չտկեցէ՛ք, կը հրամայէ Մարկոս աղան :

— Վայ Գամիկ աղա վայ, բնաւ մըտքէս չէր անցներ որ Գամիկ աղան մեզի հիւր պիտի գայ այս գիշեր, ո՞ր հովը ի՞նչեց ասանկ, վայ Գամիկ աղա վայ, էյ ինչու եք նայինք, ի՞նչ կ'ընէք կոր, չիտալը հաւատարիքս չգար կոր որ դուք հոս էք, վայ Գամիկ աղա վայ... էյ խօսէ նայինք... մեզի չտեսնելէն ի վեր ի՞նչպէս ժամանակ կ'անցունէք կոր. աֆէրիմ Մարկոս աղա, շատ աղէկ ըրեր ես որ Գամիկ աղան բերեր ես. վայ Գամիկ աղա վայ : Գամիկ աղային օղի մը տուէք, շատ բան, շատ բան, վայ Գամիկ աղա վայ, մեզի տեսնալ պիտի գաս եղեր աս գիշեր, ո՞րու մտքէն կ'անցնէր. աֆէրիմ Գամիկ աղա... օղի մը տուէք, աղջիկներ :

— Օղի չեմ խմեր :

— Հատ մը խմէ, կ'ըսէ Մարկոս աղան :

— Չէ՛, Մարկոս աղա :

— Վայ Գամիկ աղա վայ... տահա ի՞նչու եք նայինք, չօլուիս չօնուիս ի՞նչպէս է...

— Աղէկ են :

— Աղէկ ըլլան, վայ Գամիկ աղա վայ :

— Գամիկ աղա, կ'ըսէ Մարկոս աղան, դուն մեր քէփսիքս հիւրն ես. մեզի մի՛ նայիր. եթէ անօթի ես, ըսէ, ուտենք, մեզի համար հոգ չէ :

— Բա ճանրմ կեցի՛ հեղէ քիչ մը երեսը տեսնանք, տն ալ հանգստանայ քիչ մը ու վերջը կ'ուտենք. Աստուծոյ տուածէն հարկաւ բան մը պիտի գըտնենք ուտելու, անօթի չպիտի մնանք ես. ամա ի՞նչ ընենք, Գամիկ աղան կերակուրներնու չպիտի հաւնի եղեր, միսափիւր ումսուղուցու ելմէլ պուլցուղուցու ելր, հա, հա, հա, անանկ չէ մի ամա, Գամիկ աղա, չիտալը զրուցէ, դուն չիտալը խօսող մարդ մ'ես, հա, հա, հա, վայ Գամիկ աղա վայ : է վայ Գամիկ աղա, վայ, Գամիկ աղան ետպանցի չէ քի վստիսամ որ երթայ ուրիշ տուններ մեր կերակուրը աւրէ. Գամիկ աղան քէփսիքս է, այսօր չպիտի ճանչնանք զիրար ես, ոտքդ պագնեմ, Գամիկ աղա, իրաւունք չունիմ մի ամա... ասանկ հէ՛, Գամիկ աղա, այս գիշեր հոս պիտի գաս եղեր, բարի եկար, հազար բարի, ամէն օր հրամայէ, մեր դուռը բաց է, է տահա ի՞նչու եք նայինք, ի՞նչ կայ ինչ չիկայ նայինք, դրացիներնիկ ի՞նչպէս են, Եպրոս հանրմը ի՞նչպէս է, Մաքրուհի հանրմը

նշանուեցա՞ւ մի... Թորոս աղան դործ մը գտա՞ւ մի, հաւերը մորթեցի՞ր մի, ո՞ր մէկը հարցնեմ չիտեմ քի, քեզի տեսայ նէ կարծես քի գանձ մը գտայ, վայ Գամիկ աղա վայ, այս գիշեր պիտի գաս եղեր. ինչո՞ւ համար օղի չես խմեր կոր, Գամիկ աղա... մի խմեր, ես զօր չեմ ըներ, ինչու կ'ուզես նէ անանկ ըրէ, քէֆդ նայէ, սանկ հանգիստ նստէ, կ'աղաչեմ, կոնակդ բարձին տուր... կ'ուզես նէ հանուէ Լեթարի մը բերեն, բապուց բերեն... ասանկ հա՛, վայ Գամիկ աղա վայ, էյ սպրիս, ողջ մնաս :

— Կնիկ, թող չես տար որ քիչ մ'ալ ես խօսիմ :

— Տէր ողորմես, բերանդ ո՞վ բըռնած է... վայ Գամիկ աղա վայ, շատոնց է տեսած չունիմ տէ ուրախութենէս ինչ ընելիքս չեմ գիտեր կոր... անօթի ես նէ՛ նստինք սեղան :

— Գէշ չըլլար :

Գամիկ աղան երկար չունէ մը կ'առնէ :

— Աղջիկներ, պրիզօլան կրակի վերայ դրէք, ձուկն ալ տապկեցէք...

— Օհ օհ օհ, ըսաւ ինքնիրեն Գամիկ աղան, ասկից վերջը կերակուր պիտի եփուի ու պիտի ուտենք :

— Վայ Գամիկ աղա վայ, մինչև որ կերակուրը պատրաստուի, կրնաք քանի մը գաւաթ օղի խմել. ախորժակնիդ կը բացուի :

— Շնորհակալ եմ, Մարկոս աղան թող խմէ :

— Պրիզօլան հիմա կ'ըլլայ : Հիշ չը պիտի մոռնամ այս գիշերուանը. վայ Գամիկ աղա վայ :

Սեղանի զանգակը կը զարնէ :

Կը ցատկէ Գամիկ աղան և ճաշի սենեակը կ'իջնէ : Չմոռնանք հոս յիշել թէ հարբուխը Գամիկ աղային ակոսայեւրուն երեք քառորդը յափշտակած է :

— Պրիզօլայի սա կտորն առէք, Գամիկ աղա, կ'ըսէ Մարկոս աղան :

Գամիկ աղան կ'առնէ միտն, և սպառազինուելով դանակով ու սպատառաքաղով, իւր բոլոր ուժովն կ'աշխատի յօշոտել միտն : Դանակը չկտրեր. ակոսայեւրն որ արդէն կորուսած են իրենց մեծամասնութիւնն, կարողութիւն չունին կտրելու : Գամիկ աղային անօթութեան վրայ բարկութիւնն ալ կը բարդուի, և սակայն քաղաքավարութիւնը կը պահանջէ որ մի խոշոր կտորներն առանց կտորակելու կլլէ, և ցամաք հացով փորը կշտացնելու աշխատի :

— Գամիկ աղաս, պրիզօլայէն չէ՞ք արտորժիր, կը հարցնէ տիկինը :

— Շատ կ'ախորժիմ, կ'ուտեմ կոր, կերայ, շնորհակալ եմ, պիտի ուտեմ, հոգ մի՛ ընէք :

— Գինի հրամեցէ՛ք :

— Կը խմեմ, շնորհակալ եմ :

Գինին քացխած է և քաղաքավարութիւնը թող չտար որ հիւր մը տան տիրոջը յայտնէ ասանկ ճշմարտութիւններ : Գամիկ աղան չուզեր խմել . տիկինը կ'ստիպէ :

— Իմ խաբեքս համար սա բաժակը պիտի խմես :

— Գամիկ աղան կ'ստիպուի խմելու :

— Բաժակ կ'առաջարկեմ Գամիկ աղայիս կենդանութեանը :

Գամիկ աղան կ'ստիպուի խմել երկրորդ բաժակն ալ :

Մարդս ոչ միայն իւր թերութիւններն, այլ իւր սեղանին թերութիւններն ալ չտեսներ եղեր :

Գամիկ աղան անօթի փորանց քացախ կը խմէ մինչև որ վերջապէս ձուկը կը բերուի սեղան : Դանակներն, պատառաքաղներն ու պնակները կը փոխուին : Գամիկ աղան պատառաքաղով ու դանակով ձուկ կերած չէ կեանքին մէջ, մատները կը գործածէ անոնց տեղ : Բայց այսօր քաղաքավարութիւնը պարտք կը դնէ վրան տան տիրոջը սովորութեան սովորիլ : Ե՞րբ պիտի սովորի և ե՞րբ պիտի ուտէ :

— Ձէք ուտեր կոր, Գամիկ աղա, կ'ըսէ Մարկոս աղան, կարծեմ չախորժեցաք մեր կերակուրներէն :

— Քաւ լիցի, կ'ուտեմ կոր :

— Ձուկը զէչ չէ եղեր :

— Աղէկ է :

— Վայ Գամիկ աղա վայ, Միայն թէ փուշը քիչ մը շատ է, ստիկը դժուար է :

— Ինծի համար բան մը չէ :

— Մի քաշուիք, կ'աղաչեմ :

— Հոգ մի՛ ընէք :

— Իմ կենդանութեանս բաժակ մը չէ՞ք խմեր :

— Ինչպէ՞ս չխմէ, քառասուն տարի անգամ մը մեզի կերակուրի եկաւ տէ : Վայ Գամիկ աղա վայ, իրաւ որ շատ գոհ եղայ ձեր գալէն :

Գամիկ աղան երրորդ անգամ կը կըլէ քացախը :

Երրորդ կերակուրը կը բերուի . սերկելիով միս, Գամիկ աղան բնաւ չախորժիր այդ կերակուրէն, բայց ուտել ձեւացնելով պանիր ու հացով կը կըշտանայ :

Կերակուրէն յետոյ խահուէ կը բերուի, և Մարկոս աղան կ'սկսի, օգնութեամբ տրիկնոյն, չորս ժամ շատախօսութեամբ գլուխն ուռեցնել իւր հիւրին որ կ'սկսի մրափել նստած տեղը :

Պառկելու համար սենեակ մը ցոյց կը տրուի Գամիկ աղային : Հազիւ կը մտնէ անկողին, մուկները վրան կը յարձակին և կ'ստիպեն զինքն ելնել ճը-

րագ վառել և տեսնել թէ մուկներն ոչ թէ միայն անկողնոյն մէջ բանակատեղի հաստատած են, այլ պատերուն վրայ եւս կ'ենեն ու կ'իջեն : Գամիկ աղան մինչեւ առտու կը տքնէ : Ի՞նչպէս : Ամենուս յայտնի է, մարդ չկայ որ կենաց մէջ գոնէ անգամ մը մուկներու բանակին մէջ չի յայ :

Հետեւեալ առաւօտ Մարկոս աղա և տիկինն կը հարցնէին Գամիկ աղային :

— Ի՞նչպէս անցուցիք գիշերը :

— Շատ հանգիստ :

— Մուկ կ'ա՞ր :

— Չկար :

— Ի՞նչ քաշեցի ես մինչև որ մուկները սատկեցուցի նէ, կը պատասխանէր տիկինը :

— Մնաք բարով, ձեզի նեղութիւն տուի :

— Ատ ի՞նչ խօսք է, այս գիշեր ալ հրամեցէ՛ք, դարձեալ հրամեցէ՛ք, Գամիկ աղա :

— Դիտուս վրայ :

— Տունը բարեւ ըրէ՛ք :

— Լաւ : Մնաք բարով :

— Երթաք բարով :

— Վայ Գամիկ աղա վայ, ըսաւ տիկինը վերջին անգամ և դուռը գոցելով ներս մտաւ էրկանը հետ :

Գալով Գամիկ աղային, հսկայաքայլ կ'երթար միմուռով :

«Գիտեմ ես, մարդու տուն մնալն ասանկ է, մարդս իւր տունին մէջ միայն կրնայ հանգիստ ըլլալ, զօրով օղի խմէ, մինչև ժամը երեք անօթի փորանց քացախ խմէ, բերնիդ յարմար կերակուր մի՛ գտներ, ցամաք հացով կշտացիր, պարապ խօսքեր մտիկ ըրէ, այնուհետև մինչև առտու քնատ մնացիր. ինչո՞ւ համար. քաղաքավարութեան համար : Այս քաղաքավարութեան տակէն պարզապէս էջութիւն կելլէ կոր : Իրենց ըսելու էի. ես տասներկուքին կերակուրս կ'ուտեմ, օղի չեմ խմեր. շատախօսութենէ կը ձանձրանամ. քացախ խմելու սովորութիւն չունիմ, ձեր դանակները չեն կտրեր կոր, միսաֆիլի համար անակ փշտ ձուկ չեն առներ, սերկելիով միսն ուտուելու կերակուր չէ, ձեր սենեակը լեփ լեցուն մուկ է, չէ՞ք ամչնար դուք, մինչև առտու չկրցի քնանալ, մեղք չէ ինծի... չիտակը ձեզի չվայլեցուցի որ հիւր մ'ասանկ տանջէք, աւանակի տեղ դրիք զիս... կամ մարդու տեղ չդրիք զիս... ձեր ըրածը անկրթութիւն է, այո՛, այո՛, և մեծ անկրթութիւն է... կամ այսպէս վարուելու չէիք հետս... կամ բացէ՛ ի բաց դըրուցելու էի թէ ձեր ըրածը պարզապէս էջութիւն է...»

Վայ Գամիկ աղա վայ...

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

20)

Շ Ե Յ Ք Ս Բ Ի Ր

Վ Ե Ն Ե Տ Կ Ո Յ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

Հ Ա Ն Դ Ե Ս Ե

ՏԵՍԻՍ Բ.

Բոս. — Ուրեմն կեղծ սրտիդ մէջ չկայ հաւատարմութիւն : Երկինք վկայ, չպիտի ըլլամ ձեր կինը՝ մինչև չտեսնեմ մատանիս :

Նէր. — Ոչ ալ ես ձերը, մինչև չը տեսնեմ իմ մատանիս :

Պաս. — Քաղցրիկդ իմ Բորիս, եթէ գիտնայիք թէ ո՞րու տուի մատանին, եթէ գիտնայիք՝ որո՞ւ համար տուի մատանին, եթէ կարենայիք խորհիլ՝ ինչո՞ւ համար տուի մատանին, եթէ գիտնայիք ո՞րչափ դժկամակութեամբ տուի մատանին, երբ մանաւանդ մի միայն մատանին կ'ուզուէր, տհաճութեանդ սրտայուզութիւնը պիտի մեղմէիր :

Բոս. — Եթէ ճանչցած ըլլայիք մատանւոյն արժանիքը, մատանին տուողին արժանեաց կէսը, կամ ձեր պատիւը մատանին պահելու մէջ, երբէք չէիք բաժնուիր այդ մատանիէն : Կայ՞ մարդ մը այնքան տխմար որ անխորհրդաբար պահանջէ ձեզմէ բան մը որ ձեզ համար նուիրական նկատուած է : Նէրիսա ինձ ըսաւ արդէն ինչ բանի որ պէտք եմ հաւտալ. թո՛ղ մեռնիմ ես, եթէ մատանին կնոջ մը չտուիր :

Պաս. — Ոչ, պատուոյս վրայ, տիկին, հոգիս վկայ. կին մը չէ առնողը : Պարզ փաստաբան մը, որ չուզեց ինձմէ երեք հազար տուքաթ, այլ մատանիս ուզեց զոր մերժեցի, և նա վշտացած թողուց գնաց : Այս այն փաստաբանն էր որ բարեկամիս կեանքը փրկեց : Ի՞նչ ըսեմ ձեզ, քաղցրիկ տիկին, հարկադրեցայ ետեւէն մարդ վազցնել : Ամօթ և ազնուութեան դէմ պիտի լինէր այդ մերժումն և իմ պատիւս թոյլ չէր տար ինձ որ այդ աստիճան ապերախտութեամբ աղարտուէի : Ներէ ինձ, նազելիդ իմ, վասն զի, կ'երգնում ի ջահս սուրբ գիշերին, եթէ հոն գտնուէիք դուք ևս, ապահով եմ, պիտի ուզէիք որ մատանին տամ այդ արժանեւոր փաստաբանին :

Բոս. — Ուրեմն այդ փաստաբանը թող տունս ոտք չդնէ երբէք, զի իմ սիրած գոհարը նա ձեռք անցուց, մինչ երդուընցած էիր սիրոյս համար զայն պահել : Ուրեմն ձեզ չափ ես ալ ազատամիտ պիտի գտնուիմ, և նմա չպիտի մերժեմ ինչ որ ունիմ, ոչինչ, ոչ մարմինս, ոչ ամուսնոյս անկողինը : Զինք պիտի ճանաչեմ, ապահով եմ : Տանը մէջ քնացէք միշտ և Արգոսի նման պա-

հեցեք զիս, զի եթէ այդպէս չընէք, զիս մինակ թողուք, պատուոյս վրայ կ'երդնում, որոյ տակաւին տէրն եմ, այդ փաստաբանն անկողնոյ ընկեր պիտի առնում ինձ:

Նէր.— Ես ալ իւր աշակերտը, հետեւաբար ուշադրութիւն ըրէք չթողու զիս իմ իսկ հսկողութեան:

Կրաս.— Լաւ, այդպէս. բայց եթէ ձեռք անցնեմ այդ աշակերտը, կը կոտորեմ իւր գրիչը:

Անք.— Բոլոր այս կռիւներու չարազէտ պատճառն ես եմ:

Բորս.— Ամենեւին հոգ մի՛ ընէք, Պարոն, դուք մեր ցանկալի հիւրն էք:

Պաս.— Բորսիս, ներէ ինձ այս յանցանք զոր ընելու հարկադրեալ էի, և առաջի այս բազմաթիւ բարեկամաց կ'երդնում ձեր գեղատեսիլ աշաց վերայ, յորս կը նշմարեմ ես զինքս...

Բորս.— Տեսէք, նա ինքզինքը կըրկին կը տեսնէ իմ զոյգ աշաց մէջ, իւրաքանչիւրին մէջ՝ մէկ անգամ. երդուիր արդքս երկդիմի անձով, և այդպիսի երդման պէտք է հաւատամ անպատճառ:

Պաս.— Ահ, լսէ ինձ. ներէ ինձ այդ յանցանքը և կ'երդնում հոգւոյս վրայ որ ալ բնաւ չպիտի թերանամ քեզ տըւած երդմանս:

Անք.— Տիկին, ես իւր բաղդաւորութեանը համար վերջին անգամ գըրաւ դրի անձս. իմ կեանքը շատ գէշ պիտի վերջանար առանց օգնութեան այն անձին որ ընդունեց ամուսնոյդ մատանին: Կը համարձակիմ ինքզինքս կըրկին գրաւի դնել և այլ ևս ձեր ամուսինը երբեք չպիտի գտնուի կամովին երդմանազանց:

Բորս.— Ուրեմն իւր երաշխաւորը պիտի լինի՞ք. տուէք իրեն այս մատանին և պատուիրեցէք միւսէն աւելի լաւ պահելու:

Անք.— Ահա, Տէր Պասանիօ, երդուցնէք պահելու այս մատանին:

Պաս.— Ո՛վ երկինք, ճիշդ փաստաբանին տուածս է այս:

Բորս.— Իրմէ առի զայս, ներեցէք ինձ, Պասանիօ այս մատանին միջոցաւ փաստաբանն ինձ հետ անցուց այս գիշերը:

Նէր.— Դուք ալ ինձ ներեցէք, սիրելի Կրասիանօ, զի այդ փոքրիկ տղան, փաստաբանին աշակերտն, այդ մատանիի միջոցաւ երէկ գիշեր ինձ հետ անցուց:

Կրաս.— Ի՞նչ զարմանալի բան. բայց այս կը նմանի ամրան մէջ պողտոտաներու նորոգութեան, որոնք այնչափ գեղեցիկ են և պէտք չունին բնաւ նորոգութեան: Ի՞նչ, ուրեմն եղջիւրաւորներ եղանք՝ առանց արժանանալու:

Բորս.— Այդպէս կոչու կերպով մի՛ խօսիք, — ամենդ ալ զարմացած էք: Ահա՛ նամակ մը, կարդացէք զայն երբ որ ուզէք. Բատովայէն կուգայ այդ գիրը, Պէլարիօն: Այդ նամակէն պիտի իմանաք որ Բորսիան էր փաստաբանն, և Նէրիսա՝ իւր աշակերտը: Լօրէնցօ պիտի հաւատտէ թէ ձեզմէ անմիջապէս վերջ մեկնեցայ ես ևս և ահա հազիւ հասած եմ, տակաւին տուն ալ չեմ մտած: Անթօնիօ, դուք բարի եկաք, ձեզ համար ալ քովս լաւագոյն լուրեր ունիմ որոց չէի սպասեր: Շուտ բացէք այս նամակը, պիտի տեսնէք որ ձեր երեք նաւերն ընդ փոյթ հասած են նաւահանդիսը ճոխ բեռներով: չէք կըրնար գիտնալ թէ ի՞նչ տարօրինակ բաղդով այդ նամակն իմ ձեռքն է ինկած:

Անք.— Լեզուս կորուսի:

Պաս.— Ի՞նչպէս, դուք փաստաբանն էիք և ես ձեզ չճա՞նչցայ:

Կրաս.— Ի՞նչ, դուք ալ աշակերտն էիք որ զիս եղջիւրաւոր ընել կ'ուզէր:

Նէրիս.— Այո՛, բայց աշակերտը ըզձեզ եղջիւրաւոր չլինար ընել, մինչեւ որ այր մի չլինի ինքն:

Պաս.— Իմ քաղցր փաստաբանս, անկողնոյս ընկերը պիտի ըլլաք դուք. երբ կը հեռանամ ես, կ'արտօնեմ որ պառկիք իմ կնոջ հետ:

Անք.— Քաղցրիկ իմ Տիկին, վերադարձուցիք ինձ կեանք ու ապրելու միջոցներն, զի այս նամակը կ'ապահովէ զիս որ նաւերս անվնաս հասեր են:

Բորս.— Է՛հ ուրեմն, Լօրէնցօ, աշակերտս ձեզ տալիք գիր մը ունի քովն որ զձեզ պիտի ուրախացնէ:

Նէրիս.— Այո՛, պիտի տամ առանց վարձքի: Ձեզ և Նսիգային կը յանձնեմ մասնաւոր պարգեւագիր մը հարուստ չրէին կողմէ. մահուընէն վերջ ժառանգորդն էք իւր բոլոր հարստութեանը:

Լօրէն.— Չքնադադեղ տիկին, մանանայ կը սիրէք սովեալ մարդկանց ճանապարհին վրայ:

Բորս.— Առաւօտը կը մօտենայ, և սակայն ապահով եմ, կատարեալ տեղեակ չէք այս ամէն դիպուածներու. մոտենէք ներս, ըրէք մեզ հարցումներ և մենք ամենայն ճշդութեամբ կը պատասխանենք:

Կրաս.— Լա՛ւ. Նէրիսային իմ առաջին հարցումս այս պիտի ըլլայ թէ կ'ուզէ՞ մինչև վաղը գիշեր ոտքի մնալ, թէ ոչ, մնացած մէկ երկու ժամէն օգուտ քաղել՝ երթալ ննջելով: Բայց թէ լոյսը ծագած ալ ըլլար, պիտի մաղթէի որ գիշեր եղած լինէր, որպէս զի կարենայի ննջել փաստաբանին աշակերտին հետ: Շատ լաւ, բոլոր կենացս մէջ ոչ մի բանի այնչափ խնամք պիտի տանիմ, որ չափ պահելու Նէրիսայի մատանին:

Թարգ. Ա. ՀԱՐՄԱՐԳԱՅԹԱՆ
Վ Ե Ր Զ

ԿՈՎԿԱՍԷՆ ԼՈՒՐԵՐ

Ստացել ենք էջմիածնում հրատարակուող «Արարատ» ամսագրի յունուարի տետրը: Այս տարի այդ «Արարատ»ը փոփոխութեան է ենթարկուել և արտաքուստ. այլ ևս էջմիածնի պատկերը չէ կրում իւր ճակատին. այժմս նորա ճակատին իբրեւ պատկեր դրած է ձեմարանը:

— ՇԱՄԱԽՈՒՑ մեզ գրում է մեր թղթակիցը. Իւր ժամանակին հաղորդել էինք պատուական «Նոր-Դար» ի ընթերցողներին, որ Մոսկուայի Կոյսերական հնագիտական ընկերութիւնը տեսնելով Շամախու թեմի առաջնորդ Նորին Բարձր. Սրբ. Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցի հնագիտական ասպարիզում ցոյց տուած օգտակար ծառայութիւնը, միաձայն հաւանութեամբ, ինչպէս գրում է ինքը ընկերութեան խորհուրդը, ընտրեց Ղնորին Սրբազնութիւնը ընկերութեան աշխատակից անդամ: Անցեալները կարգացինք պատուական «Նոր-Դար» ի թիւ 16ում Մոսկուայից հաղորդած մի լուր, որով լրատու պարոնը յայտնում է, որ «Նորին Սրբազնութիւնը հնագիտական ընկերութեան նախագահ գրաֆուհի Ուվարովային ուղարկել է բեւեալագրերի մի ստուար այլրոմ ծանօթութիւններով հանդերձ, և թէ այդ այլրոմը թարգմանում է ռուսերէն...»:

Իբրեւ գործին տեղեակ, պիտի յայտնենք, որ նախ՝ Նորին Սրբազնութիւնը ո՛չ թէ գրաֆուհույն, այլ նոյն իսկ ընկերութեան խորհրդին է ուղարկել, համաձայն ընկերութեան գրաւոր խընդիրքին, և երկրորդ՝ ուղարկուածը ոչ թէ այլրոմ է, այլ մի ստուար, մօտ 300 երեսից բաղկացած աշխատութիւն, որ ամբողջովին նուիրուած է բեւեալագրերի հետազոտութեան: Աւելորդ ենք համարում յայտնել, որ ուղարկուած աշխատութիւնը Նորին Սրբազնութեան ընդարձակ գործի միմիայն եւրոպ մասն է և վերաբերում է վերջերումս գրտնուած բեւեալագրերին: Ամբողջ գործը անցեալ թուի հոկտեմբերին ուղարկուած է Պոլսի Պատրիարքարանին, որպէս զի ի ցոյց հանուի «Սահակ-Մեսրոպեան» մրցանակաբաշխութեան ժամանակ: Նորին Սրբազնութեան գործի մէջ կցուած բեւեալագրերը մասամբ ձեռքով է արտագրուած, մասամբ լուսանկարով: Մենք անձամբ տեսել ենք այդ աշխատութիւնը և յոյս ունինք, որ մէջի բեւեալագրերը իրենց ճիշդ ընթերցմամբ կարող են մեր պատմութեան շատ մութ կէտերը պարզել, որպէս վկայում է հընադէտ Պ. Նիկոյլսկի: Սրբազան հնագէտը շատ տարիներ առաջ է սկսել իւր

ուսումնասիրութիւնը. այդ գործում խրախուսել են Սրբազան Հօրը հոգեւոր Գէորգ կաթողիկոսը և Մակար սրբազանը. Այժմ մեր առաջնորդը դարձեալ կարողանում է իւր ազատ ժամերը նուիրել այդ օգտաւէտ գործին:

Նորին Սրբազանութիւնը այս օրերս կ'ուղարկէ ընկերութեանը իւր գտած արծաթէ և պղնձէ հնագոյն դրամները, կարևոր բացատրութիւններով: Մեծ քանակութեամբ դրամներ յանձնել է նաև հանգուցեալ Մակար սրբազանին, որոնք և, ինչպէս լսեցինք, գտնուում են էջմիածնի թանգարանում:

— «Արարատ» ամսագրի յունուարի տետրում մի խուլ կրիտիկայ կայ մեր հայ պարբերական մամուլի մասին, որ ի թիւրքիս և ի Ռուսիա, առանց անունները յիշելու. մէկ կարգ թերթերին փառարանում է «Արարատ»ը, միւսներին վատաբանում:

Ցաւում ենք, որ այդ «Արարատ» ամսագիրը բաց չէ խօսում, որ խմանայինք թէ ինչ է ուզում և ինչ է նորա միտքը: Նորա պոլէմիկական ուղղութիւնը իրաւունք է տալիս մեզ ընդունելու, որ այդ «Արարատ»ը համազգային եկեղեցական օրգան չէ ուզում լինել:

ՆՈՐ-ԴԱՐ

ՓՇՈՒՐԲ ԳԱԽԱՌԱԿԱՆ

ԱՂՕԹՔ, ԵՐԳ, ՀԱՆԵԼՈՒԿ
Կեսաբիոյ Մուհմեդսուլէ Դիւղէն
Առ Պարոն ՆԱՐԶԻՄ

6.

Այլ աղօթք

Լիւսիւնկան նոր նորին շնաւոր,
Կանանչ կէրմիր Տէր թագաւոր,
Տէր կնայեր մանկունք եկեր,
Մեղքս տորեր վարձկա պերեր:

7.

Աղօթք հաղորդուելու տանն

Տու լուսեղէն տաճար էս,
Էօսկիւ պատիկ խորան էս,
Խնկա տփիկ նման էս,
Վարդ անուշիկ հտտով էս,
Մեղաւորին քաւիչ էս,
Մեղա քեզ կոյս Մարեամ:

8.

Հանգիւղիկ

1. Եփրեմի մը մածուն ունէմ, կէսը սեւ՝ կէսը ճերմակ: (Եջֆ=ալֆ):
2. Ընթերցող լեռներ, սեւ սեւ ձեւեր, Տէրիւն չօղան շէն կրեւածեր: (Թուղթ եւ գիր):

3. Մաղմը վեգ ունէմ, մէջը ինէկ մը ունէմ: (Ասեղֆ եւ Լուսիֆ):

4. Մենի մենի՝ պուլուզ սէնի: (Ոսպ):

5. Պըտղիկ պուլգիկ, մէջը անուշիկ: (Ֆեսուխ):

6. Թէնիր մը ունէմ, չորս հաց կաւուն: (Ընկոյզ):

7. Էրկար օլուխ, կիւմպիւր սօլուխ: (Հրացան):

8. Ծեռքս պատըհանը խօթեցի, քառսուն չիֆթ կոմէշ հանեցի: (Ձմեռուկ):

9.

ԵՐԳ

Հարուստն ալ կու պաշլէ ըրզակին մալը,

Օր մը միտքը չիյնալ հոգիին պանը,

Օր մը ախան կըննա զուրնային կալը,

Մեղաւորն ալ կ'ըսէ թէ վայ ինծի վայ իմ մեղացս:

Քարիչն ալ կու քաշէ կըլտին մագէն,

Արդար ուրախանա առաջ կու վագէ,

Երանի արդարին վայ մեղաւորին,

Մեղաւորն ալ կ'ըսէ թէ վայ ինծի վայ իմ մեղացս:

Արդարը կու տանեն խուկերօք մօմօք,

Մեղաւորն ալ կու տանեն փուշօք դատասօք,

Երանի արդարին վայ մեղաւորին,

Մեղաւորն ալ կ'ըսէ թէ վայ ինծի վայ իմ մեղացս:

Օր մը դատաստանը պիտի կանչուինք,

Հային ճորտը պիւթիւն պիտոր խալըսենք,

Երանի արդարին վայ մեղաւորին,

Մեղաւորն ալ կ'ըսէ թէ վայ ինծի վայ իմ մեղացս:

Լուսաւորիչը մեզի էս ճանրան պացաւ,

Յիսուս Քրիստոս տուաին պերանը կեցաւ,

Երանի արդարին վայ մեղաւորին,

Մեղաւորն ալ կ'ըսէ թէ վայ ինծի վայ իմ մեղացս:

Ի Հաւաքածոյից Տ. Վ. ՊԱԼԵԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հիւրաւարհի վալը՝ ամենէն աւելի անորոշելի և հրապուրիչ տեսակներէն մին է՝ անշուշտ երաժշտութեան մէջ: Բ. Վալըսի նոր վալսն, Լէ Միրթ (Les Myrtes), մեծ յաջողութիւն գտեր է ի Բարիզ, Ընտիր վալս մ'է, հիացուցիչ մէլէտիով մը: Իւր մասին տրուած գովեստները չափազանց չեն բնաւ: Եռաձայնը (թրիօ) միայն, այնչափ աշխոյժ, այնչափ նոր, պիտի բաւէ ամենազբոժարահաճ ականջներն իսկ գերել: Մէկ տարւոյ մէջ վաճառուեցաւ 18000 օրինակ: Գին 2 Ֆրանք, երկձեռն՝ դաշնակի համար՝ 2 1/2 Ֆրանք՝ քառաձեռն: Հասցէ՝

Alph. Ledue, 3, rue Grammont, à PARIS

« ՖՈՒՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒ »

Ե Ի

«ԴԻՏՈՂ ԹԱՂԵՅԻՆ» ԽԱՍԳԻՒՂԻ

Արեւելի մէջ խաագիւղէն «Դիտող Թաղեցիկ» ստորագրութեամբ քննադատութիւն մ'երեւցաւ «Փռանսերէն լեզու»ի վերայ, — գործ Միհրան էֆէնտիի խորթումէն:

Սոյն «Դիտող»ն կ'ըսէ թէ «Տղայք» (խաագիւղի ներսէսեան վարժարանի) չօգտուելով այս գիրքէն, պարտաւորեցան ի մի կողմ թողուլ: Մեք՝ որ տարի մը դասախօսեցինք սոյն դասագրքի վերայ, կը յայտարարեմք թէ այս այնպիսի զրպարտութիւն մ'է զոր առանց ամչնալու չպիտի կրնար ընել յօդուածագիրն, եթէ իւր դիմակին ապաստանած չլինէր:

Այս գործ իւր մէջ կը բովանդակէ Ընթերցարան, Քերականութիւն և հրահանգք բարգմանութեան Ֆրանսերէնէ ի Հայ և փոխադարձ: Իբր ընթերցարան՝ Փռանսերէն ընթերցանութիւնը կ'ուսուցանէ ի ձեռն ընթերցման կանոնաց և դասուց: Սոյն բազմազան կանոններ այնպիսի ճարտարութեամբ դասաւորուած են ամբողջ միամեայ շրջանի մէջ, մինչ զի զայնս կ'ուսանի ուսանողն ոչ միայն առանց դոյզն դժուարութեան, այլ և կատարեալ հաճոյքով և զբօսնելով: ԺԴ. դասէն սկսեալ մէն մի եօթնեակի մէջ ուսանողը աստիճանաբար կը ճանչնան և կ'արտաբերեն Փռանսերէն՝ զիրենք հետաքրքրող էական և իրաց անուններն. ընտանիք, ազգական, տուն, դպրոց, ուսումն, փողոց, պարտէզ, բոյսք, կենդանիք, դաշտ, տիեզերք, և ըն, և ըն, իրենց մասերովն:

Քերականական կանոններն ևս խիստ բանաւոր դրութեամբ մի կ'աւանդէ: Իւրաքանչիւր եօթնեակի մէջ մի կամ երկու դաս դնելով, Փռանսերէն լեզուի մասունք բանին կ'աւարտէ շատ ամփոփ կերպով, այնպէս որ ի վախճան նոյն շրջանի, ուսանողը կը ճանչնայ փոփոխելի և անփոփոխ բառերն, անուանց սեռն, հոլովանիչ նախդիրներն, յոգնականացուցիչ մասնիկներն, գիտէ Օժանդակ (être et avoir) և Ա. Ըծորդութեան բայից խոնարհումն հիմնապէս, գիտէ մինչև իսկ ի կիր արկանել զոր ինչ ուսած է յընթացս դասուց:

Թարգմանութեանց գալով, գովելի է և յայտմ Արդոյ հեղինակին ուղղութիւնն: Պարզ պարբերութիւններէ ըսկըսեալ գեղեցիկ աստիճանաւորումով թարգմանութեան նիւթ կը լինին փոքրիկ հատուածներ, պարզ նախադասութիւններ (Հայ է ի Ֆրանս. Թարգմանութեան համար, շարադրուած յա-

տուել ոճով) սիրուն ոտանաւորներ, որք ի բերան ուսանելի են միանգամայն: Դիտելի է թէ սոյն բերանացի ուսումներ քանի՞օն օգտակար կը լինին նոր ուսանողին: Դիտելու արժանի Բ. կէտ մ'ալ սա է թէ յաճախ նախորդ դասու ընթերցման օրինակն յաջորդ դասուց մէջ նիւթ կը լինի թարգմանութեան: Եւ ի ձեռն Récitationներու, թարգմանելաց և աւանձին բառագիտութեամբ ուսած բառերու, ուսանողը գրեթէ կրնայ թարգմանել կամ հասկնալ գրքին վերջի ընթերցման օրինակներն:

Երկու խօսք ևս «Դիտող» էֆէնտիի և «Հանգէս Ամսօրեայ»ի Գեր. Քննադատին նկատած թերութեանցն: Առաջինն է b, c, d, g, p, t տառից ըստ նախնեաց հնչման աւանդումն: Մի և նոյն դիտողութիւնն ըրած է Ազնուաշուք Տօթէօր թիրեաքեան էֆէնտի: Եթէ իրաւացի գտնեմք սոյն դիտողութիւն, կրնամք ըսել թէ այս դասագիրք սահմանուած է լոկ Պոլսոյ և մի քանի գաւառաց համար: Եթէ հեղինակը կանխաձայն է Պօլսեցոյ համար, այլ սակայն Ռուսահայոց և շատ մի թուրքիոյ գաւառաց ազգայնոց մասնաւոր գոհութեանն կրնայ արժանանալ: Թողումք որ հեղինակին կողմանէ յէջ ԺԴ. և ի «Ծաղիկ» չարթաթերթի նշանակուած օրինակներն ճարտար պատասխաններ են, կարեմք ըսել թէ այս գրքին էական մասին, ոգւոյն և ոճին դէմ թերութիւնն մի չէ երբէք: Բ. Տպագրութեան մէջ սոյն տառից արտաբերութիւնը կրնայ հեղինակն յարմարցնել այն գաւառաց, յորս սպառած է իւր գործոյն մեծ մասն: Բ. Քանի որ ուսուցիչ են աւաջնորդք, յայտնուած կասկածներն անտեղի են:

Նաև Գեր. քննադատն զարմանալի կը գտնէ ոտանաւորներուն Գերմաներէնէ թարգմանելն: Այս մասին կ'ըսեմք թէ քանի որ Արգոյ հեղինակն սոյն գործոյն յօրինման իւր յատուկ աւանդման եղանակն ունեցած է զոր այնչափ բանաւոր և օգտակար կը գտնէ նոյն իսկ Գեր. Հայր հեղինակն, սոյն կամացն կամ ընտրութեանը խառնուիլ մեզ անկ չէ: Բաւական է որ Փռանսերէն լեզուի հիմնական կանոնաց հակառակ ոչինչ կայ յայնս ստգտանելի:

ԴԱԻԻԹ Յ. ՍԱՄԻԻՍԵԱՆ

92 Յունւար 7, Տիպրիկ

Բ Ժ Ի Ծ Կ Կ' Ո Ւ Զ Ո Ւ Ի

Ծովեղբերայ գաւառէ մը ճարտար բժիշկ մը կը փնտռուի: Պայմաններն իմանալու համար դիմել «Ծաղիկ»ի Խմբագրատունը:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Շուէտէն ի Լոնսոն. — Շուէտացի խմբագիր մը, նոյեմբեր ամսուն մէջ Շուէտէն ի Լոնսոն կը ճանապարհորդէ մակոյկով մը, որ ոչ առաքատ ունէր և ոչ դէկ, միայն երկու դիակներ, հիւսիսային ծովուն մէջ 33 ժամ փոթորկի մը դէմ մաքառած է:

Նոր խառնուրդ. — Փ. Ուաթթէր, 95% անագէ և 5% սլինձէ բաղկացեալ խառնուրդ մ'է հնարած, որ պիտի գործածուի ապակեղէնները ծածկելու որոց արծաթի գոյն կուտայ, նաև ապակեղէն խողովակները միացնելու:

Ամենամեծ մեղուափեթակ. — Բնական ամենամեծ փեթակը կը գտնուի ի փէնթիւքքէն (Միացեալ Նահանգք) որ ծանօթ է Mamoth Bechive անուամբ. քարայր մ'է այս որոյ տմենալայն խորշը 150 ոտք բարձրութիւն և 10 աք (մի աք հաւասար է 4840 քառակուսի ետրոսայի) տարածութիւն ունի. քարայրին ժայռը խիստ կարծր է և մեղուներու մեղրով լեցուն: Ֆրանսացի նշանաւոր մեղուաբոյժ Պէրթրան, քսանեվքց կարգ ունեցող փեթակներ ունի, որ կրկինն է քան ինչ որ Անգլիա ունի: Աշխարհիս ամենամեծ մեղուաբոյժն Հարպիսըն, ի Քալիֆօրնիա, ունի 6,000 փեթակ որ տարին կը հայթայթէ 200 000 լիւր մեղր (մի անգլիական լիւրը հաւասար է 373 կրամի): Ի Յունաստան 30,000 փեթակ կայ, արտադրելով 3,000,000 լիւր մեղր: Ի Տանիմարգա 90,000 և ի Ռուսիա 110,000 փեթակ, իւրաքանչիւրը արտադրելով 2,000,000 լիւր, Պէլճիգա 200,000, 5,000,000 լիւր, Հոլանտա 240,000, 6,000,000 լիւր, Ֆրանսա 950,000, 23,000,000 լիւր, Գերմանիա 1,450,000 և Աւստրիա 1550,000 լիւրաքանչիւրը 40,000,000 լիւր: Միացեալ-Նահանգաց 2,800,000 փեթակները սեպակականութիւնն են 70,000 մեղուաբոյժներու, տարին կ'արտադրեն 62,000,000 լիւր մեղր: Հաշուուած է թէ մէկ ունկի (31 կրամ) մեղր ժողովելու համար մեղուն պարտի 218,750 ծաղիկներ ծծել:

Ապակեայ սալայտակներ. — Հ. Պըրթէն և Էքֆիսթէն խորհած են գործածել ապակեայ սալայտակներ, լուսաւորման համար այն գետնափոր վայրերու որք փողոցներու ներքե կը գտնուին: Այս սալաքարեր պիտի կազմին կորնթարգ ոսպնեակներէ և ցլացուցիչ հատուածակողմ ապակիներէ: այս միջոցաւ լոյսը լուսագոյն կերպիւ մը պիտի կրնայ բաշխիլ:

Այնքապ

ԹԱԹՈՒԼ ՔԻՒԲԵԼԵԱՆ



ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբաւսութիւնք. — Վանայ կեովաշ գաւառակին գայմագամ տնուանեցաւ Մէհմէտ Սապիթ էֆէնտի, գայմագամ Աղրակի: Ատանայի նահանգին կուսակալ անուանեցաւ Հաճի Իզզէթ էֆէնտի, նախկին կուսակալ Պասրայի: Գասթամուլիի նահանգին կուսակալ անուանեցաւ Փաիք փաշա, նախկին կուսակալ Մուսուլի: Կարնոյ նահանգին Տէֆթէրտար անուանեցաւ Գուսուր էֆէնտի, Տէֆթէրտար Վանայ: Էտիրնէի Աճէպագատ գնաւաւորին գայմագամ անուանեցաւ Մահմուտ Նէտիմ պէյ, գայմագամ Ճիւսէի:

Ասիւնք. — Սանիյէ միւթէմայիզի աստիճան տրուեցաւ Կէմէլէյի գայմագամ Սայիտ պէյի:

Պատգամաւս. — Գ. կարգի Մէհմէտիյէ պատուանշան տրուեցաւ Պրուսայի հանրային պարտուց վարչութեան վերատեսուչ Բասիմ փաշայի և նոյն վարչութեան անգամներէն Միքայէլ էֆէնտի: Գ. կարգի Օսմանիէ՝ Պրուսայի Հանրային պարտուց վարչութեան ճիւղին տնօրէն Թորգոմեան էֆէնտի: Ե. կարգի Մէհմէտիյէ՝ Պրուսայի առեւտրական սենեկին նախագահ Օհանեան Բարսեղ էֆէնտի:

— Խառնուրդ ալիւրներու ներածումը պիտի արգիլուի:

— Եղեւնադաւս աւետանք կ'զբաղի Թօմա, Հասան, Եօրկի և Հիւսէյին տնուն աւազակաց և իրենց չորս մեղսակցաց խնդրով: Սոքա լեռը տարած էին նիկոմիդիացի երկու պատանիներ, երկուքն ալ Յակոբ անուն, և 40 ոսկի փրկանք առած էին: Նոյնպէս լեռը տարած էին խողակի վաճառական Տիմիթի չորպաճին և Անատոլիի երկաթուղեաց երկրաչափ Պ. Կէրսոնը, և 2000 ոսկի փրկանք ստացած էին: Ի վերջոյ Գարթալի մօտ ի Շալիամը Պ. Ճիվանի ազարակը մտնելով, ուզած էին առեւանգել զինքը, բայց չյաջողելով՝ միայն վիրաւորած, կինն ալ սպաննելով փախած էին:

— Մահուան դատաւարտուած է Մուլա Իպրահիմ օղլու Հասան անուն չարագործ մը, մին այն անձանց որք ի Լիւլէ Պուրկազ անգլթօրէն սպաննած էին նախկին Մալ Միւտիի Հասան էֆէնտին, կինը, տղան ու սպասուհին: Կայս. Իրատէ մը հրամայած է մահուան պատիժը գործադրել ի Լիւլէ Պուրկազ:

— Պրուսայի երկրագործական Համիտիյէ վարժարանին տնօրէն անուանեցաւ Քալափասի էֆէնտի, երբեմն երկրագործական քննիչ Սեբաստիոյ, Էտիրկի և Սուրիոյ, ու վերջերս ալէնկիւրի:

— Կարճոյ կուսակալ Հասան խայրի փաշա փութով յառաջ կը տանի ոստիկան-զինուորաց հաշուոց քննութիւնն և այս կարևոր մարմնոյն վերակազմութիւնը:

— Պայագիսի կառավարիչ Մէհմէտ Ալի փաշա կը կատարէ ձեւովի ցեղերուն մարդահամարը:

— Աղի գործարան մը մայրաքաղաքիս մէջ հաստատելու համար խնդրուած մենաշնորհը մերժուած է, յայտարարուելով որ խնդրարկուն ազատ է աղ պատրաստել առանց մենաշնորհի:

— Տուժար մը պատրաստել հրամայուած է՝ նշանակող մայրաքաղաքիս, արուարձանաց և գաւառաց մէջ պաշտօնական արտօնութեամբ, ինչպէս նաև առանց արտօնութեան կառուցեալ եկեղեցեաց ու զանազան աղօթատեղեաց քանակութիւնը:

— Ազատ արձակուած են Բէթրօ, Արթին և Նիքօլի անուն անձինք, որք անվայել լեզու մը գործածած լինելով, ի Հռոդոս և յԱքես բերդարգելութեան դատապարտուած էին, վասն զի այդ տեղերէն ծանուցուած էր թէ այդ անձինք ուղղած են իրենք զիրենք:

— Կարճոյ կուսակալութիւնն որոշած է որ տեղւոյն ապուխտագործ իրենց արհեստանոցները փոխադրեն քաղաքէն մէկ ժամ հեռու Գըրգ Տէյրիմէն Պօղազը ըստուած տեղն, որպէս զի օդը չապականութիւն մորթուած անասնոց դարչանոցութեամբ, ու զանազան հիւանդութիւններ յառաջ չգան:

— Զիւրու ցուցահանդէս մը պիտի կազմակերպուի Պոլսոյ Քեաղըտխանէ ըստուած տեղը:

— Սամսոնէն եւ Օրսուէն եգիպտացորենի արտածման արգելքը վերցեր է:

— Դուճաւուր լիմօնաս կազէօզներու վաճառումն արգելել կը մտածուի, իբրև նիսասկար առողջութեան:

— Ի Բաղէ Ժիւնը անընդհատ կը տեղայ. ճանապարհք գոցուած և թըղթատարական երթևեկութիւնք դադարած են:

— Մուսանիա-Պուսա երկաթուղւոյն զծին շինութիւնն աւարտած լինելով, այսինքն պայմանեալ ժամանակէն ութ ամիս առաջ, բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ մայիս մէկին, այսինքն Պայրամի երրորդ օրը:

— Կրթական նախարարութիւնը խորհրդակցութիւններ կը կատարէ այժմ, մայրաքաղաքիս նախնական վարժարանաց վիճակն աւելի եւս կանոնաւորելու, գաւառաց մէջ գտնուած այդ կարգի վարժարանաց թիւն աւելցնելու և գիւղախմբոց ու գիւղօրէից մէջ եւս նախնական վարժարաններ բանալու համար:

— Ուզուն Քէօբէի գաւառակին մէջ իսա անուն աւազակ մը սպաննուած և ընկերը ողջ՝ ձերբակալուեր են:

— Հրդեհի դէմ ապահովագրութեան Օսմանեան ընկերութիւն մը կազմելու արտօնութիւն խնդրած են Եէնի Տիւնեա Տիմիթրաքի էֆէնտի, Թօրնօ պէյ և այլք:

— Ի Քիւլիւ-Չէմէնէ պիտի դատուի խրիսթօ անուն հովիւն, իբրև հեղինակ հանգուցեալ Ատէմար Սալավանի սպաննութեան:

— Այսրնի երկաթուղւոյն Տէնիզլիի ճիւղին շինութիւնն անցեալ տարի աւարտած, և սակայն ցարդ ճամբորդաց փոխադրութեան սկսուած չլինելով, տեղւոյն ժողովուրդը այս մասին հանրագրով մը դիմում Երած է Բարձ. Մեծ-Եպարքոսին: Խնդիրն հաղորդուած է Հանրային շինութեանց նախարարութեան:

— Հանրային պարսոց վարչութիւնը որոշած է յառաջիկայ մարտն սկսեալ աւելցնել ամսաթուղկներն այն ամէն պաշտօնից որք գործունէութիւն ցոյց տուած են, ինչպէս և դրամական վարձատրութիւններ ընել արժանաւորագուցից:

— Էնսազէ կոչուած հին չափին գործածութիւնն արգելուած է:

— Տոքթ. Վուլֆովիչի սպաննութեան գործին իբրև մեղսակից եօթն անձինք ձերբակալուած են ցարդ: Ասոնցմէ մին, ի Գասըմ Բաշա սրճարանապետ խրիսթօ, կը խոստովանի թէ կը ճանչնայ այն երկու անձերն որք ոճիրն ի գործ դրին, բայց չուզեր յայտնել անոնց անունը:

— Դասապայի երկաթուղւոյ գիծը գնել առաջարկած է Պ. Նակէլմաքէտ:

— Անուրդի դնել կը մտածուի Ե. Դիւնլիոյ, Գոնեսայի և այլ նահանգաց մէջ գտնուող կարգ մը հանքերու շահագործումն:

— Էնկիւրիի երկրագործական քննիչ անուանուած է Տիգրան էֆ. Ասլանեան:

— Պուսայի կառավարութիւնը ձերբակալել է Հիւսէյին, Հասան և Հիւսէյին Բէհիւլան անուն երեք աւազակներ որք Պուսայէն Պիլէճիկ տանող ճամբուն վրայ կողոպտած էին Պիլէճիկի գործարանատէրերէն Անատօլեան Յակոբ և Գրիգոր աղաները:

— Էլ-Հազաիք լրագիրը, Վեհ. Սուլթանի ծննդեան տարեդարձի օրէն ըսկսեալ, պիտի հրատարակուի կէսը թուրքերէն և կէսն արաբերէն:

Ա Ր Ժ Ե Ք Դ Ր Ա Մ Ո Ց				
Օսմ. լիւան 100 զըշ էն				
Մէքիւիյէ	108	44	Վ. Էնչնոց	102 20
Քուսուրք մէքիւ	107	40	Բուսիյոյ բօլ	89 30
Մանր մէքիւ	102	40	Նաբուլէն	87 48
Մէթալիք	98	40	Գրիմից	51 40
Հինգնոց	102		Անգլ. լիւան	140 2
Մանէթ թղթարժարժ 8 77				
Գոնեսայի	20	37	Բուս. երկ.	72 1/2
Թահիլ. Օսմ.	76	35	Թասպիլէ	22 20

Գ Ր Ա Գ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Գ Ր Ի Գ Ո Ր Ա Ր Թ Ր Ո Ւ Ն Ի

Յայտնեցինք արդէն թէ «Մշակ» խմբագիր Պ. Գրիգոր Արծրունւոյ իբր թէ հեղինակութեամբ երեան ելած «Է-վէլինա» վէպը պարզապէս թարգմանութիւն է Գաղղիացի Մարսէլ Պրէ-վոյի «Իտէպիստի Դաւանքը» գրքին: Այս անգամ՝ Նոր-Իար լրագրէն կ'իմանամք թէ, Մարսէլ Պրէվոյի սոյն աշխատութիւնը հրատարակուած է նոյնպէս ռուսական Նէսէլիա հանդիսին 1891 օգոստոս և սեպտեմբեր թուոց մէջ և առանձին գրքոյի եւս վերածուած է: «Շնորհակալ պէտք է լինիք մի շարաթաթերթից, կ'ըսէ Նոր-Իար, որ մեզ Հայերիս ինքուրոյն վիպասաններ է նուիրում, ինչպէս խմբագիր Արծրունին է»:

Այսանհրեքելի յայտնութեանց հանդէպ, Պ. Գրիգոր Արծրունի երես ունեցած է իւր ստորագրութեան ներքեւ հրապարակու յայտարարելու թէ «Է-վէլինա» իւր մաքի ծնունդն է: Բերայի Սոսքեանց Կանաւաւն ալ՝ բնականաբար երես ունեցած է ո՛չ միայն արտատպելու Պ. Արծրունւոյ սոյն յայտարարութիւնը, այլ և իբրև թերթօն հրատարակելու սոյն վէպը՝ ամէն անգամ ներքեւ իբրև հեղինակի ստորագրութիւն խոշոր գրերով խնամով գետեղելով Գրիգոր Արծրունի անունը: Այդ երկու սրտակիր, համեմատելի, համագոյակից խմբագրութեանց համար կը մաղթենք որ «Աստուած չամբցընէ զիրենք», վասն զի շատ անհամ դրութեան մէջ պիտի զգան զիրենք՝ երբ անգամ մը սկսին ամենալ:

Նոր-Իարի ներկայ տարւոյ 25 և 26 թուոց մէջ Էվէլինայի մասին երեցալուրջ քննադատութիւն մը՝ նոյն լրագրոյ աշխատակից Պ. Յ. Ճաղարէգեանի ստորագրութեամբ:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ «ԾԱՂԻԿ»Ի

Յ. Ս. յԱրապկիւր, Ն. Գ. յԱյնթապ, Ա. Կ. — Շումալ. — Հրկուեցան:

Յ. Ս. յԵփրեմէ. — Ձեզ զրկուած գրքերու հաշիւէն տախալին կը պարտիք 14 զըշ:

Յ. Ա. Ի Շ. Դաւաքիսար. — Ձեր յանձնարարութիւնը չկատարուիր, վասն զի ձեր զրկած փուլերը իբրև դրամ չեմք կարող ընդունիլ: այդ փուլեր մեր քով կ'սպասեն ձեր հրամանին: Յայտարարեցինք քանիցս թէ, բաց ի Օսմանեան նամակատան փուլերէն, ուրիշ որ և է տեսակ փուլ չեմք կարող դրամի փոխարէն ընդունիլ: — Երկաթուղւոյ պարտատոմսերու գինը կրնաք իմանալ «Ծաղիկ»ի Արժէք Դրամոցէն:

Ա. Յ. ի Մալկարա. — Հրկեցէք, տեսնեմք մի անգամ, նաւանականաբար տպուի. եթէ երբէք յարմար չգատուի հրատարակութիւնը, ձեր աշխատութիւնը չկորսուիր: խնամօք կը պահուի մեր քով, որպէս զի երբ որ ուզէք՝ յետ ստանաք:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՇՄԱՐՆԵՐ

Գ Բ Ա Դ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն (1)

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի
«Ամուսնական Խնդիրներ» գրքին
վրայ,

Ի Բժիշկ Միսաք Արամեանէ

Է.

Սեդրակեան Սրբազանի աշխատութեան երկրորդ մասը կը բովանդակէ ամուսնալուծութեան խնդրոյ տեսութիւնը, ուր ո՛չ միայն չերեւիր այս մասին առաքելական եկեղեցւոյ անխտոր վարդապետութեան անյեղի ճշմարտութիւնները, այլ և հիմնաւոր վերլուծութեան ալ չենթարկուիր այն օտարուսումն և օտարաշունչ քարոզները, որոցով մեր նոր լուսաւորիչները հասարակաց միտքը կը շփոթեն և կը մոլորեցնեն, ամէն ճիգն ու ջանք թափելով այն նպատակի համար, որ ամուսնութեան վրայէն ցմահ անքակտութեան աստուածադէր հրամանի կրօնքը խզեն և սոսկ քաղաքացիական դաշնակցութեան կարգի վերածեն:

Երբ մանաւանդ եկեղեցական մ'է որ կը ձեռնարկէ գրել այս խնդրոյ վերայ, ամէն իրաւունք ունինք սպասելու իրմէ որ, փոխանակ քանի մը տարիներէ ի վեր մեր մէջ երևան ելած կեղծ ազատամիտներու գաղափարաց հետեւելու, ջանար օգտուիլ արդէն իսկ գիտութեան յարգարած ճանապարհէն: Ի՞նչու չօգտուիլ այն նիւթերէն զորս ուսաց գրականութիւնը մթերած է այդ խնդրոյ մասին: Այդ նիւթերը՝ բաց ի իրենց քանակէն՝ այն արժանաւորութիւնն ունին, որ անոնց մթերման գործին մասնակցած են համալսարանաց հոգեւոր ակադեմիաներու և հրապարակախօսութեան ազատ և հեղինակաւոր ոյժերը, և խնդիրը ազատօրէն քննուած է ամէն կողմէն, — իրաւաբանական, եկեղեցաբանական, պետական և հասարակավարական գիտութեանց տեսակէտէն, և յաղթութիւնը մնացել է եկեղեցւոյ կողմը: Ս. հեղինակի գործածքը ոչ միայն հեռի է այս փափագուած հանգամանքներն ունենալէ, այլ և ամուսնալուծութեան խնդրոյ մասին այնպէս իմն կը տրամաբանէ որ մեծ խնդիր մ'երևան կուգայ ինքնին, այն թէ՛ մի եկեղեցական հեղինակ՝ եկեղեցւոյ համար և եկեղեցական տաւրկայի մասին վարդապետելու ժամանակ՝ ո՞ր տեղէն պարտաւոր է քաղել իւր ի-

մաստութիւնը և ո՞ր հեղինակութեան վրայ հաստատել իւր վարդապետութիւնը: Այս հարցի վրայ գուցէ ամէն մարդ ծիծաղի, իսկ եթէ երկայնամիտ է և զիջանող մեր տգիտութեան՝ կը պատասխանէ, թէ՛ այդպիսի գէպքերում այդպիսի վարդապետի ուսուցման հիմքը և աղբիւրը՝ Ս. Գրոց հեղինակութիւնն է: Մենք ալ այդպէս գիտելիք, բայց Սեդրակեան Սրբազանը մեզ կը յայտնէ թէ՛ մենք մոլորութեան մէջ ենք եղել, և մի այնպիսի ճշմարտութիւն կը յայտնէ զոր կարծեմ ո՛չ մի եկեղեցի, բաց ի բողոքական աղանդաւորներէն, լսած չէ: «Ամուսնութեան Ս. խորհրդով միացած այր և կին, կը վարդապետէ Ս. հեղինակը, յանձն կ'առնեն փոխադարձ սիրոյ և անբաժան կենակցութեան պարտաւորութիւն, որ նոյն է ըսել թէ՛ միմեանց հետ կը կապուին խորհրդաւոր դաշնակցութեամբ: Ամէն իրաւաբանական դաշնակցութիւն յայտնի իրաւաբանական պարտաւորիչ գործութիւն ունի երկու կողմի համար: Եթէ մի կողմը մեղանչէ իւր պարտաւորութեան դէմ, բաց ի այն պատասխանատուութենէն զոր կ'ունենայ օրէնքի առաջ, միւս կողմին ալ իրաւունք կ'ուսայ ինքզինքն ազատ համարելու պարտաւորիչ պայմաններէն: Այր և կին պարտաւոր են, այո՛, փոխադարձ հաւատարմութեամբ պատուել ամուսնական անկողնոյ սրբութիւնը, բայց եթէ անոնցմէ մին կը մեղանչէ այդ սրբութեան դէմ, փոխադարձ սիրոյ պարտաւորութիւնը կը խանգարուի, հետեւաբար կը խանգարուի նաև անբաժան կենակցութեան պարտաւորութիւնը: Ինքը Փրկիչը այս նշանակութիւնը տուաւ ամուսնութեան խորհրդին...» (Մատ. 31—32): Փրկիչական այս վճիռը բոլոր քրիստոնեայ եկեղեցիք միակերպ իմաստով են մեկնել և ընդունել, այսինքն՝ ամուսնութիւնը «առանց բանի պոռնկութեան» անլուծանելի և «վասն բանի պոռնկութեան» լուծանելի կը տարբերի միայն հռովմէական եկեղեցին, որ միանգամ կատարուած պսակը վերջին պարագային մէջ ևս անլուծանելի քարոզելով, կ'ընդունի միայն երկու ամուսններու իրարմէ բաժնուիլը, արձակել բառը բաժանել բացատրելով: (Եր. 151—152): Սեդրակեան Սրբազանը այս դատողութենէն յետոյ մէջ բերելով մի ընդարձակ կտոր Եդ. Հիւրմիւզեանի Տեսական Աստուածաբանութենէն՝ որպէս պատկեր-հոռմէական եկեղեցւոյ մեկնութեան՝ «և ոչ վասն բանի պոռնկութեան» խօսքի վերաբերութեամբ, կը քամահրէ այդ մեկնութիւնը՝ որպէս վնասակար վարդապետութիւն հասարակական բարոյականի նկատմամբ:

Որքան վնասակար է կաթոլիկ աստուածաբանի տարօրինակ վարդապետութիւնը հասարակական բարոյականի նկատմամբ, մենք չհասկցանք և չենք ալ ուզեր հասկնալ. — մեր խելքը այդքան երկար տեղ չհասնիր: Մեզ պէտք եղածն է խմանալ, թէ ո՞ր տատիճան համապատասխան է Ս. Գրոց բարոյականի ոգւոյն և եկեղեցւոյ վարդապետութեան մեր տնտեսն մեկնիչներու այն վարդապետութիւնը թէ՛ Եթէ՛ ամուսններէն մին կը մեղանչէ իւր պարտաւորութեան դէմ, միւս կողմին իրաւունք կ'ուսայ ազատ համարելու իրեն ալ պարտաւորիչ պայմաններէն, և թէ՛ Եթէ՛ անոնցմէ մին կը մեղանչէ այդ ամուսնական անկողնի սրբութեան դէմ, փոխադարձ սիրոյ պարտաւորութիւնը կը խանգարուի, հետեւաբար կը խանգարուի նաև անբաժան կենակցութեան պարտաւորութիւնը, ուրեմն ամուսնութիւնը կը լուծուի և ազատ կողմին կը ներուի վերստին ամուսնութիւնը:

Չնայելով որ իրաւաբանական տեսակէտով իսկ, դաշնակիցներէ միոյն պարտազանցութիւնը տակաւին անպայման իրաւունք չտար միւս կողմէն ալ հրաժարուելու դաշնադրութեան պարտաւորութիւններէն՝ բաց ի այն դէպքերէն, երբ դաշնակիցներէն միոյն պարտազանցութիւնը կ'օչնչացնէ պայմանադրութեան առարկայի կամ անհնար կը դարձնէ յաջողումն այն նպատակի, որու համար հաստատուած է պայմանադրութիւնը, այսու հանգերձ համարինք թէ՛ աշխարհի իրաւաբանից տեսակէտով գուցէ ներելի է այն մեկնութիւնը՝ թէ ամուսններէն մէկի պարտազանցութիւնը իրաւունք կ'ուսայ միւս կողմին ալ զինքն ազատ համարելու պարտաւորիչ պայմաններէն, որովհետեւ անոնց տեսակէտով նոյն ինքն ամուսնութիւնը մի սոսկ քաղաքացիական մասնաւոր դաշնակցութիւն է, որուն հիմն է անհատական կամքի ազատութիւնն և ինքնիշխանութիւնը: Բայց կարելի է՞ արդեօք եկեղեցւոյ տեսակէտով այդպէս դատել: Բաց ի այն, որ քրիստոնէական բարոյականի բացարձակ վճռով անպայման դատաւարուած է «ակն ընդ ական» օրէնքը, ամուսնութիւնն է հանդիսաւոր ուխտադրութիւն Աստուծոյ առաջ առն և կնոջ մէջ ցմահ անբաժան կենակցելու՝ համբերելով աշխարհի ամէն տեսակ նեղութեանց և փորձանաց, և միմեանց օգնելով, և՛ ըստ Ս. Գրոց՝ ուխտաւորը Աստուծոյ առաջ պարտաւոր է իւր ուխտը կատարել: Եթէ ամուսնական խորհրդաւոր միութեան մէջ՝ ի մի մարմին միացողներն իրենց անհատական կամքի տէրը լինէին, և եթէ սոցա միաց-

(1) Շար. «Ծաղիկ» Նախորդ թիւէն:

ման գերագույն նպատակը միմիայն ֆիզիքական պարագայն լինէր, մէկի մեղանշումը այս պարտաւորութեան դէմ՝ ըստ աշխարհիկ իմաստութեան՝ կարող էր միւս կողմին իրաւունք տալ ազատ համարելու զինքն ալ պարտաւորիչ պայմաններէն: Բայց տարբերութիւնն այն է, որ Տէրամբ հաստատուած ամուսնութեան մէջ այր և կին իրենց անհատական կամքի ու անձի տէրը չեն, այլ երկուսն ալ ծառայ են տիրոջ կամքին, ըստ այնմ թէ՛ ոչ գիտէք, զի մարմինը ձեր տաճար են հոգւոյն, որ է ի ձեզ, զոր ունիւք յԱստուծոյ և չէք անձանց ձերոց տէր, քան զի զնոց գնեցայք, փառաւոր արարէք զԱստուծոյ ի մարմինս ձեր և ոգիս ձեր» (Կորնթ.):

Թողնելով ձեռնհաս մեկնաց դատողութեան, թէ ո՞ր աստիճան օգտակար է հասարակաց բարոյականի նկատմամբ կաթոլիկ աստուածաբաններն իսկ քամահրող մեկնաբանի «ակն ընդ ակն» վարդապետութիւնը, անհնար է չնկատել Սեդրակեան Սրբազանի այն սխալ տեսութիւնը, թէ առաքելական եկեղեցին կանոնած է ամուսնալուծութեան, ուրեմն վերստին ամուսնանալու դրութիւնը՝ ամուսնական անհաւատարմութեան պատճառով: Ասոր համար եկեղեցին մի օրէնք ունէր Պօղոսի միջնորդութեամբ յայտնուած, և այնպէս բացարձակ, որ ամենեւին թիւրիմացութեան տեղի չէր կարող տալ, մինչև անգամ երբ կինը արձակուած լինէր վասն բանի պոռնկութեան: Այլ կանամբեաց պատուիրեմ ոչ ես, այլ Տէր, կնոջ յառնէ մի՛ մեկնիլ. ապա եթէ մեկնեացի՝ անայր մնացէ, կամ անգրէն ընդ առն իւրում հաշտեցի. և առն զկին իւր մի՛ թողուլ: Հարկ է փոքր ինչ ուշադրութեամբ վերծանել թէ՛ առեալանշաց խօսքերը և թէ՛ առաքելոց վարդապետութիւնը այս խնդրոյ մասին, իսկոյն կը համոզուինք որ Սեդրակեան Սրբազանի քամահրած հաւատքն առաքելական եկեղեցւոյ վարդապետութիւնն է: Աստուածութեան բացարձակ հրամանը յայտնող առաքելը՝ որ բաց ի յայտնական վճռէ՝ իւր կողմն ալ մանրամասն հրահանգ կուտայ առն և կնոջ ընտանութեան օրինաց վերաբերմամբ, մինչև իսկ նոցա գաղտնի ֆիզիքական յարաբերութեանց մասին պայմաններ կ'որոշէ, — ամէն տեղ հաւատարիմ կը մնայ քրիստոնէական ամուսնութեան հիմնական օրինաց թէ՛ «զոր Աստուծոյ զուգեաց, մարդ մի մեկնեաց»: Նորա բաղմամբ ու ընդարձակ հատուածներէն (Հռոմ. 2—3. Ա. Կորնթ. 5. 1—39. Եփես. 5. 22—39. Կող. 4. 18—19) և ոչ մէկի մէջ կայ կնոջն արձակիչ զին ուրիշ կին առնելու թոյլտուութիւն:

նոյնպէս և ոչ ալ իւր ամուսինէն բաժանուող կնոջ ուրիշի հետ ամուսնանալու թոյլտուութիւն(1): Օրէնքը մէկ է. եթէ արձակեն կամ արձակուին, անայր կամ անկին պիտի մնան, քանի որ զոյգը կենդանի է: Կ'ուզէինք իմանալ մեր Ս. Հեղինակէն թէ, առաքելը ուղղելով իւր խօսքը հաւատացելոց, կարող է՞ր արդեօք՝ կնաթողութեան կամ այրալուծութեան վերաբերմամբ՝ բաց ի յայտնապէս որոշեալ դէպքէն՝ ուրիշ դէպքի, ուրիշ յարգելի պատճառի հնարաւորութիւնը ենթադրել: Եթէ արձակման կամ բաժանման պատճառը միմիայն մի հատ էր՝ «վասն բանի պոռնկութեան» և քրիստոնէի համար ներելի էր միմիայն այդ պարագայի մէջ բաժանուիլ, միթէ բնական չէ՞ ընդունիլ, որ առաքելալի խօսքը անմիջապէս ուղղուած էր այդ փորձանքին հանդիպած քրիստոնէին: Ճշմարիտ է՝ առաքելալի միջնորդութեամբ այս աստուածային պատգամի յայտնութեան ժամանակ՝ հեթանոս աշխարհը բարոյական ապականութեան սարսափելի տեսարան կը ներկայացնէր. ամուսնութեան գաղափարը գրեթէ իսպառ եղծուած էր. ապահարգանք՝ թէ՛ պատճառաբանուող և թէ՛ փոխադարձ հաճութեամբ՝ մի սովորական բան էր: Տարեգիրը՝ ողբալով այս ապականութիւնը՝ որպէս նկարագիր տիրող բարքի՝ օրինակ կը բերէ մի մարդ որ քսաներկու անգամ փոխել է իւր կինը և քսաներեքերորդ անգամ ամուսնացել է մի կնոջ հետ, որու համար քրտանուամէկերորդ ամուսինն էր: Սակայն առաքելալն աչքի առաջ չունի այս ապականեալ, մեղաւթաթաւ շրջանը, այլ այն փոքրիկ հօտը, որ գնոց գնուել էր: «Գրեցի ի թղթի այսօր չխառնակիլ ընդ պոռնիկս: Եւ ոչ եթէ ընդ պոռնիկս առ խառնիս այսօրիկ, կամ ընդ ագահս, կամ ընդ յափշտակողս, կամ ընդ կռապարիշոս, ապա թէ ոչ և յաշխարհէ իսկ պարս կիք ելանել: Բայց արդ գրեցի ձեզ չխառնակիլ. եթէ ոք եղբայր անուանեալ կամ պոռնիկ իցէ, կամ կըռապարիշոս կամ ագահ, կամ բամբասող, կամ արբեցող, կամ յափշտակող,

(1) Եւ գիտեմք որ «Մշակ» ի նմբագիր Պ. Գրիգոր Արծրունի, որ՝ իւր պաշտօնին բնութեամբ՝ հասարակաց բարոյականի ուսուցիչն ու կենդանի օրինակը պիտի լինէր, տարիներէ ի վեր կը կենակցի Երևանցի բժշկի մը այրաթող կնոջն հետ, և այսքան տարիներէ ի վեր կ'աշխատի հետն ամուսնանալու թոյլտուութիւն ստանալ, և չյաջողիր: Ասոր համար է որ Հայաստանեայց եկեղեցւոյ օրինաց փոփոխում կը քարոզէ «Մշակ» և կը պաշտպանէ զՍեդրակեան Արիստակէս եպիսկոպոս, որ կուսակից է նոյն գաղափարին: Ծ. Խմբ. «Ծաղիկ» ի

ընդ այնպիսում և հայ մի՛ ուտել: Զի կայ իմ և զարտաքինն դատելոյ. ո՞չ ապաքէն դուք զներքինսն դատիցէք և Աստուած զարտաքինսն դատիցէք. բարձէք զչարսն ի միջոյ ձերմէս: (Ա. Կորնթ. 5. 9—13): Աւելորդ չէ նկատել, որ առաքելալի այս վճիռը տրուած է ի Կորնթոս քրիստոնէից մէջ պատահած ազգապղծութեան դէպքի առթիւ և նոյն իսկ այդ թղթով է որ յայտնուած է Տիրոջ հրամանը բաժնուած ամուսնոց մասին: (Շարունակելի)

ԾԱՏՈՒՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԵՐԳԸ

Օր մը ԾԱՏՈՒՐ, խառն ատենի մը մէջ իւր Սագին թեւերուն յոյզը կրօնի կը նուիրէ աւետան բորբոքմամբ, և զայն պաշտպանելու քաջութիւնը կը գործէ, ափ ի բերան կացուցանելով վիճաբանողն՝ որ կը պարծենար շատ բան ունենալ պարծանաց արժանի քան Ծատուրինը: Աւանդութիւնը համառօտութիւնը միայն հասուցած է մեզ, և ես կարճ կապելով՝ ի լոյս կը հանեմ այդ երգն, թարգմանելով ի թրքաբարբառէ ի տեղական հայ բարբառ:

Ե Ր Գ

1. Աչքը, քեզ ասեմ, հոգիէն խօսէ,
Ո՞վ էր որ մտաւ դրախտին էգին.
Խաբեց մեր հայրը ուտեցոյց պտղէն,
Մերկացոյց լոյսէն իւրեան մնացին:
 2. Սէրչէ որ կ'ըսեն մէկ խորունկ կէօլ է,
Պարգեքն Աստուծոյ անյատակ ծով է,
Նքմիւ երկու լեզու ժԲ. ճամբայ(1),
Ո՞վ էր որ կեցաւ այն ճամբուն վրայ:
 3. Ծատուրն ալ էօխին խմած է քապը,
(բաժակը)
Մեծ ուրբաթ գիշեր պահեն մեծ
սուգը,
Զատել են գառը կուլայ մայրիկը,
Ո՞վ էր չմեռած մտաւ հոգվարքը(2),
(գերեզման)
- Բաբերդ Գ Պ Ի Ր

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ. — Նոր բառագիրք հայերէն լեզուի. — Հրատարակուեցաւ 38—39 երորդ թերթն: Բաժնեգինն 15 դահեկան: Բաժանորդագրութեան համար գիմել առ հեղինակն, ի Կ. Պոլիս, Էսկի-Ջալթիէ, Պէրպէրեան տպարան:

- (1) Հայք խորհրդաւոր կ'ընդունին ժԲ. ազգ քրիստոնէից:
- (2) Քրիստոս կենդանի էր և մեռեալ ի գերեզմանի:

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԹԵՅԵՐՈՒ ՆԻԳՕԼԱ ԵՒ ԲՕԼ ՍՄԻՐՆՈՅ ԵՂԲԱՐՑ

Ղալաթիա, Ռուսական վանքին դիմաց, Այնիգօլա եկեղեցւոյն մօտ, Թիւ 30

Վաճառատունս՝ անցեալ տարւոյ Մայիսի սկիզբները բացուած լինելով, վաճառելի թէյերու տեսակներն եւ գիներն ի ստորեւ նշանակեալ, կը ծանուցանէ ի գիտութիւն յԱրգոյ հասարակութեան։

Թիւ 1. Լիանսին	Ֆունթ 32	Դահեկան
» 2. Զինական վարդ	» 30	»
» 3. Պուքէ Էմբէրիալ	» 26	»
» 4. Ֆուչէֆու	» 20	»
» 5. Տնական թէյ	» 16	»
» 6. Խնայողական տեսակը	» 12	»

Վերոյիշեալ թէյերը՝ մէկ, կէս եւ մէկ չորրորդ ֆունթնոց (133 արամ) ծրարներու մէջ ամփոփուած՝ մետաքսեայ եւ կապարեայ թղթով պատած, իրենց վըրայ կը կրեն վաճառատան կնիքն եւ ստորագրութիւնն։ Սոյն թէյերը չաւրուելու համար մթերանոցին մէջ մասնաւոր տեղ մը գրաւած են, ուր արգիլուած է նոյն իսկ ծխելն։

ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵՂՄԵՐԻՆ

Անոնք որ կրնան որոշել թէյին լաւն ու վատը, կարող են իրր նմոյշ գնել վաճառատունէս փոքր ինչ եւ փորձել։ Վաճառատանս միւս ճիւղն, որ ի Ռուսիա աշխարհածանօթ է արդէն։

Սոյն թէյեր կը վաճառին նաեւ ի Բերա, Թիւնեյի դիմաց Ֆրաթէ վաճառատունը, Պոլիս Պահճէ գարու Շէյխիւլիսլամ խան թիւ 2 Միւսիւ Նիքիթիչ Էրպէնկին մթերանոցը, Օրթոգիւլ Թաշ Նէրտիւպան փողոց թիւ 5 Պ. Գրիգոր Միսկճեանի դեղարանը, Իւսկիւտար Թաշ Տէմիրճիլէր փողոց թիւ 25 Միւսիւ Ա. քէստօրիաիսին դեղարանը եւ Գաաղգիւլ Նպարավաճառ Բաթաթանասիօին մթերանոցը թիւ 19։

(15—18)

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԹԵՅԻ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ ԵՒ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ.

Պահճէ—Գարու, ձէլալ պէյ խանի դրան կից, Թիւ 10



Զմեռուան առթիւ սոյն հանրածանօթ վաճառատան մէջ պատրաստ կը գտնուին Զինէ եւ Ճափայէ ուղղակի հասած նոր բերք՝ զանազան տեսակ գերընտիր եւ ազնիւ ու անուշաբոյր ամէն ճաշակի յարմար։ — Ծաքոնական, Զինական եւ Հնդկական այլ եւ այլ մեծութեամբք եւ ձեւերով թէյի տուփեր, գեղակերտ եւ նկարազարդ — Յաճախորդաց գոհացում տալու համար բնու ջանք չխնայուիր։ — Յանձնարարութիւնք կը կատարուին փութով եւ ճշգրտութեամբ։ — Գիները

որոշ եւ խիստ չափաւոր։ — Զի՛ք սակարկութիւն։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

133րդ ՎԻՃԱԿԱՆ ՈՒԹԻԻՆԸ

Տեղի պիտի ունենայ յառաջիկայ մարտի 19 ին։ Մեծ պարգեւն է

600,000 ՖՐԱՆԿ. ԿԱՄ **30,000** ԳԱՂ. ՈՍԿԻ

Պիտի շահին 600 անձինք։ Ամենէն փոքր պարգեւն է 400 ֆրանք։ Բաղդատովմք վաւերացեալ են Օսմանեան առեւտրական նախարարութեանէն։

Գին քաղղատունի 7 1/2 դրոշ։

Գաւառներէն ստանալ ուղղութիւնը պէտք է դիմեն ԵՄԱՂԻԿԻ Յանձնակատարութեան Դրասենկին։ Փօստի ծախուց համար պէտք է շրկել մէկ զրուշ աւելի։

Շահող թուոց ճիշդ ցուցակը կը հրատարակուի ԵՄԱՂԻԿԻ մէջ։

ԿԻԻՆ ՏՕՂՏՈՒ

Սուլթան Խամամ, Ֆնտգլեան խան, 41

Եւրոպայէն նոր բերուած հետեւեալ ապրանք կը վաճառուին 12 դրուշ 30 փարայի։

1 Գծաւոր բրդեայ արանց փանեղա։
3 Զոյգ կապարագոյն բրդեայ արանց փանեղա։

1 Հատ գունաւոր բրդեայ կանանց փանեղա։

2 Զոյգ կապարագոյն բրդեայ կանանց գուլպայ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնաշապիկ։

1 Հատ Բրօֆ. Ժաքէրի դրու թեամբ ներքնավարտիք։

1 Անգղ. կտուէ օձիքով ու թեւնոցով արանց շապիկ։

3 Արանց շապիկ նորածեւ ճերմակ կուրծք։

6 Արանց շապիկի նորածեւ օձիք։

3 Զոյգ քթանէ շապիկի թեւնոց։

1 » մէջը ֆանելայով ձեւնոց։

1 Հատ գունաւոր արանց փանեղայ վարտիք։

1 Հատ բրդեայ կանանց ուննոց։

1 » բուրդէ հիւսուած կանանց ծածկոյթ։

1 Հատ գունաւոր բրդեայ տղոց չըր-չազգեստ։

1 Հատ բրդեայ տղոց բաճկոնակ։

2 » ամենալու տեսակէն մետաքսեայ փողկապ։

12 Հատ գունաւոր կամ ճերմակ քթան թաշկինակ։

6 Հատ գունաւոր երեսի սրբիչ։

4 » կարմիր գծաւոր խաւուռ։

3 » շատ մեծ ոտքի խաւուռ։

4 Հատ ծայրերը գունաւոր ծաղիկեկար քթան խաւուռ։

3 Հատ ծայրերը շինուած լաւ քթան խաւուռ։

6 Հատ գունաւոր քթան՝ սրբիչ։

1 » մետաքս կամ բուրդ կանանց լասթիքի փանեղայ։

1 Զոյգ շատ երկայն անգղ. շղարչէ վարագոյր։

1 Հատ մետաքս տուփի մէջ 2 լաւանտա, 1 օճառ, 1 օտըքօշնեղ։

6 Հատ շուրջը գունաւոր կանանց քթան թաշկինակ։

4 Հատ լաւ տեսակ արանց քթան թաշկինակ։

6 Հատ շուրջը անթիքայով ճերմակ կանանց թաշկինակ։

6 Ծաղիկեկար տամասէ անձեռոց։

1 Հատ ծոպերը շինուած 8 հոգինոց սեղանի ծածկոց։

6 Անգղ. արծաթէ ապուրի դգալ։

3 Հատ դանակ եւ 3 պատառաքաղ։

2 » գոյնզգոյն լամպի փանեղայ։

2 Զոյգ գծաւոր բրդեայ կանանց գուլպայ։

3 Հատ Լիոնի մետաքսէ գունաւոր թաշկինակ։

2 Հատ շատ մեծ քթանէ խաւուռ։

2 » լաւ տեսակ գաղ. մետաքս թաշկինակ։

6 Հատ Անգղ. արծաթէ սուրճի կամ անուշի դգալ։

3 Բրդեայ լասթիքի տղու գուլպայ։

Յանձնարարութեանց համար պէտք է գրել «Մաղիկի» Յանձնակատարութեան Դրասենկակին։

8—12

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՄԷՆ ՏՆԵԼԱԿ ԴԱՇՆԱԿԱՆՑ

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ

Վկայեալ դաշնակցարդար է՝ ՌԱԽԻ
հռչակուսի գործառն

Գնումն եւ վաճառումն
Փոխանակութիւն ձեռն դաշնակցաց հետ

Կը վաճառուին ամէն տեսակի դաշ-
նակներ աւարական վճարմամբ եւ մասնա-
ւորաբար Գաղղիոյ լաւագոյն գործա-
րաններէն Բէլէնի դաշնակները, խիստ
գլխաւորապէս գինեւորով
Մասնաւոր յանձնարարութեամբ ամէն
գործարանաց դաշնակներէն կը բերուին

Վարձու նոր դաշնակներ չափաւոր
գինեւորով

Բաժանորդագրութիւն դաշնակաց
յարդարման (accord):

Դաշնակաց նորագութիւն, գաղղիական
ընտիր նիւթ եղէններով:

ՀՐԱՀԱՆԳ դաշնակները չհիշուելու
եւ լաւագոյն վիճակի մէջ պահելու:

Դաւառներէ ելած յանձնարարու-
թիւնը ամենայն խնամով եւ փութով կը
կատարուին:

Անմրցելի աժանութիւն

Աւելի մանրամասնութեանց համար
գլխաւոր Բերա, Մեծ-Փողոց, Ղալաթա
Սարայի գլխաց, Խրիսթաքի խան,
թիւ 10: (20—30)

ԱՄՈՒՍԵԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴ

ԱՄՈՒՍԵԱՑԵԱԼ ԱՆՁԱՆՑ

ԳՐԵՑ
80Բ. Է. ԲԼԻՄՈՆ
Բժշկական համալսարանէն
Բարիգու.
ՏՊԱԳՐ. Գ. ՊԱՆՏՍԵԱՆ

Գին 5 Լր.

Ձեռնասյի բժշկական համալսարանէն համ-
ալսարան 80Բ. Բլիմանի սոյն հետաքրքրաշարժ
եւ ընտիր երկարութիւն հայերէն մաքուր
աշխատարարի ծաղկմանուած, բարոյական
բազմաթիւ գոտերով աղագուր թանկագին ծա-
ւառութիւնն որ պիտի մատուցանէ այն ամէն ան-
ժանց, որ ամուսնական խորհրդաւոր կենաց
մէջ մտնելու մտաւոր եւ կամ մտած, նաեւ գի-
տական մտ ճշմարտութիւններով պիտի ցուցնէ
ՍԷ: ապագայ ամուսինը ինչ պարտին գիտնալ
իրենց ամուսնութեան նախընթաց օրը, եւ այ-
նուհետեւ, նաեւ թէ ո՞ր են այն անմիջական
գործմաններ, հարկաւոր կատարելապէս բու-
ժելու ամուսնական հակառողջապահիկ զեղծ-
մանց-խնուր եւ ցաւալի հետեւանքները:

Կեդրոնացեղին է Ջաղդաբեան գրատուն, կը
գտնուի նաեւ բոլոր Հայ գրավաճառաց քով:

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱԲԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ըսկի-Ջաղդաբեան փողոց

ՅԱՆԷԼԱ ԱՊՐԱՆԱՑ ՀԻՒՍԱՐԱՆ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԱՍԼԱՆԵԱՆ ԵՂԲԱՐՑ

Ի Մահմուտ փաշա, Բիւրքնի խան, Թիւ 26 եւ 15, որոյ մասնաճիւղն է
Ի Պահէյ—Դարու, Մաքսատան կարգ, Թիւ 44 Թօնաֆիյէի վաճառատունը:



Թէ՛ մեծ եւ թէ՛ փոքր քա-
նակութեամբ՝ արանց, կանանց
եւ տղայոց համար՝ անխառն
բրդէ, մանածէ, եայլն, ուզ-
ուած թանձրութեամբ եւ ուզ-
ուած չափով յանձնարարու-
թիւնը կ'ընդունուին ու պատ-
րաստ կը ծախուին ֆանէլա
չապիկներ, վարտիքներ, մի-
սոցուներ, եայլն: Ապ-
րանքները կը մրցին եւրոպա-
կաններուն հետ թէ՛ աժանու-
թեամբ, թէ՛ դիմացկունու-
թեամբ եւ թէ՛ իրենց նուրբ
ճաշակով: Յաճախորդք ամէն
կերպիւ գոհ պիտի մնան:

18—24

Մոշրատեան Մկրտիչ եւ Յովհաննէս եղբարց վաճառատունը

ԵՐԿԱԹԻ, ԽՈՒՐՏԱՎԱԹԻ, ԳՈՐԾԵԱՑ ԵՒ ԱՅԼՈՑ

Կ. Պոլիս, Ալաճա Համամ, Թիւ 44 եւ Ղալաթիա, Բէրշէմպէ բազար,

Մահմուտիյէ—ձատտէսի, Թիւ 70 եւ 59:

Անգղիական, գաղղիական եւ ամերիկեան կարեւոր գործարանաց մէջ պատ-
րաստեալ զանազան տեսակ երկաթեղէնք, ուռնական կախիկաղակք (առան քիլի-
տի), հիւսան (տիւլկէր) գործիներ, եկեղեցական զանգակք, խարտոցք, զինկոյէ
անաններ, գործարանաց վերաբերեալ մեքենայք, երկրագործական բազմազան
գործիներ, եայլն, եայլն, ամենքն ալ շատ աժան գինեւորով: Ընկերութեանս մե-
քենագործն գլխաւորութիւններ կ'ընծայէ մեքենայից գործածութեան ուսման համար:
Կ. Պոլսէ եւ գաւառներէ ամէն ուղղակի յանձնարարութիւնք չուտ եւ կանո-
նաւոր կը կատարուին: Մեր քով չգտնուածներն ալ յանձնողչէքով եւրոպայէ բե-
րել կուտանք եւ ուզուած տեղերն ու նաւահանգիստները կը փոխադրեմք:

Մեր վաճառատանց վարչութեան հասցէն է՝
Մ. Յ. ՄՈՒՐՏԱՑԵԱՆ ԵՂԲԱՐԳ
16—24 70, Եօրկանճըլար ձատտէսի, Ղալաթիա, Կ. Պոլիս

ԱՐԱՐԱՅԵԱՆ ԵՂԲԱՐԳ

ԴԵՂԱԳՈՐԾԻ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԻՉԻ ՄԱՍՆԱԽՈՐ ԴԵՂԵՐՈՒ

ՍԱՐՍԱԲԱՐԻԼԱ

ԸՈՊ ՍԱՐԱՅԵԱՆ

ՍԱՄՓՈՍՆ

Արիւնը մաքրելու եւ վերանորոգելու
համար 30 տեսակ բուսեղինօք յատկա-
պէս պատրաստեալ ընտիր եւ արտօմա-
համ օշարակ, որ միակ գործմանն է
արեան անմաքրութենէն յառաջ եկած
հիւանդութեանց, որպիսիք են՝ մոր-
թային հիւանդութիւնք, սոլնակաւ
ախտ, քոստոտութիւն, Թուզլու պալ-
կամ, մայասըլ, գաղղիական ախտ, թէ՛
հին եւ թէ՛ նոր՝ որու միակ հրաշալի
գործմանն է: Գին՝ շիւր 25 դրու:

Կը գտնուին Պոլիս, Սուլթան Համամ, Բիւշիւք Աշըր էֆ. խան, Թիւ 10:

Գաւառական յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

1—10